Azg Վազ

Azg armenian daily

20 ՄԱՐՏ 1997 ՀԻՆԳՇԱԲԹԻ # 52 (1306)

ԼՂՀ նախագահը կդառնա՞ ՀՀ վարչապետ

երեկ հեսմիջօրեի Ազգային ժողովի միջանցքներից ու գերասեսչությունների ընդունարաններից լուրն արագորեն տարածվեց գրասենյակները, խանութներն ու տները՝ Լեւոն Տեր-Պետրոսյանը վերջապես կայացրել է իր որոշումը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետ է նշանակվելու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Ու մինչ խաղաղական ու լրագրողական շրջանակներն առաջին տպավորության պատճառած ցնցումից դեռեւս ուշքի չեկած փորձում էին մեկնաբանել «որոշումը», դրա նպատակահարմարությունը, խմբագրություններում ու լրատվական գործակալություններում տենդագին պատրաստում էին «նոր վարչապետի» կենսագրականը, սուղում-ջոկում հարմար լուսանկարները: Ասվել էր (ո՞վ էր ասել՝ ոչ ոք չգիտեր), որ արդեն պատրաստ են զույգ հրամանագրերը (վարչապետ Արմեն Սարգսյանի հրաժարականի ընդունման եւ նոր վարչապետի նշանակման), մնում է դրանց սորագրում-հրապարակումը: Սակայն մինչեւ ուշ գիշեր ոչինչ չհրապարակվեց: Հայաստանը մեկ օր եւս մնաց առանց վարչապետի: Ոչ ոք չբացատրեց, թե ինչ էր պատահել: Գուցե առաջին ցնցումը կլանել-սուզելու փո՞րձ էր: Կամ գուցե ժամանա՞կ էր պետք, որպեսզի նախորդ օրը երեւան ժամանած եւ երեկ երեկոյան Ստեփանակերտ վերադարձած Ռ. Քոչարյանը նախ իրեն ընտրած ժողովրդին բացատրեր մեկ «այլ» հանրապետության վարչապետի պաշտոնն ստանձնելու հանգամանքները: Եվ կամ արտաքին ճնշումնե՞ր կան: Կարծենք՝ կտեսնենք:

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ

Հայաստան-Իրան-Թուրքմենստան. Ընդհանուր առեւտրի գումարը կհասնի 20-50 մլն դոլարի

ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ

«Հայաստանի, Թուրքմենստանի եւ Իրանի միջեւ փոխշահավետ տնտեսական հարաբերությունների խորացումը շրջանի անվտանգության երաշխիքն է», այս հայտարարությամբ եզրափակեց երկօրյա եռակողմ հանդիպումները ՀՀ փոխարտգործնախարար Սերգեյ Մանասարյանը: Նա նշեց, որ փորձագետների մակարդակով անցկացված երեւանյան հանդիպման հիմնական նպատակը՝ աղրիլին կայանալիք երեք երկրների արտգործնախարարների հանդիպման նախապատրաստումն է, որի ժամանակ էլ կստորագրվեն փոխըմբռնման հուշագրեր: Մամուլի ասուլիսին ներկա Իրանի փոխարտգործնախարար Մահմուդ Վայազին եւ Թուրքմենստանի փոխարտգործնախարար Մուրադ Նազարովը նույնպես կարեւորեցին շրջանային համագործակցությունը, հատկապես ընդգծելով տնտեսական եւ քաղաքական հարաբերությունների ներկա բարենպաստ վիճակը: Ի դեպ, հանդիպման արդյունքում պետք է ստորագրվեին չորս արձանագրություն տրանսպորտի, առեւտրատնտեսական, բանկային եւ էներգետիկայի բնագավառներում համագործակցության մասին:

Մեր այն հարցին, թե հնարավո՞ր է կողմերը համաձայնության չգան, եւ արձանագրություններ չստորագրվեն, առեւտրի, սպասարկումների եւ զբոսաշրջիկության նախարար Գառնիկ Նանագուլյանը պատասխանեց. «Բացառվում է, քանի որ մնացել է զուտ տրագրական աշխատանք»: Այն, որ կողմերը համաձայնության չեն եկել տրանսպորտային համատեղ ձեռնարկություն ստեղծելու հետ կապված խնդիրներում, հավաստեցին եւ պրն Մանասարյանը, եւ պրն Նանագուլյանը: Վերջինս այդ հանգամանքը կապեց երեք երկրներում գործող որոշակի կանոնների եւ ավանդույթների հետ: Իսկ պրն Վայազին, նշելով տնտեսական համագործակցության կարեւորությունը, հայտնեց, թե առայժմ երեք երկրները առեւտրական կապերը զարգացնում են աղրանափոխանակության միջոցով:

Առեւտրատնտեսական հարաբերությունների ընդհանուր գումարը կհասցվի 20-50 մլն դոլարի, թեեւ ըստ պրն Նանագուլյանի, գումարների մասին կոնկրետ խոսակցություններ չեն եղել:

Փոխարտգործնախարարները չբացառեցին, որ հնարավոր նոր ոլորտ դարձնեին կմիանան նաեւ շրջանի այլ երկրներ, օրինակ բերելով Հայաստան-Իրան-Հունաստան-Վրաստան բառակողմ համագործակցությունը:

Սակայն, ըստ դիտորդների, դժվար թե առայժմ եռակողմը դառնա բառակողմ, քանի որ ներկա համագործակցությունը մեծ դժվարությամբ է առաջ ընթանում, իսկ նոր կողմի միանալու դեպքում փաստորեն ամեն ինչ կսկսվի զրոյից:



ԴԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑ

Ամբողջականություն, ինքնորոշում, բայց նաեւ աղակենտրոնացում

Ավարտվեց ԵԱՀԿ համանախագահության ժողովը

ԵՐԵՎԱՆ, 19 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Փարիզում այսօր ավարտվեց եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպության եռյակ համանախագահության ժողովը, որի խնդիրն էր ընդունել Ղարաբաղի հակամարտության լուծման նպատակով տարվելիք բանակցությունների նոր փուլի ծրագիրն ու ժամանակացույցը:

Ինչպես հաղորդել է «Ազատություն» ռադիոկայանի հայկական բաժնի Փարիզի թղթակիցը, Ֆրանսիայի արտգործնախարարության մամլո ծառայության մի պատասխանատու ասել է, որ Ֆրանսիայի նշանակումը իբրեւ համանախագահ, ցույց է տալիս իր երկրի ցանկությունը մասնակցելու Ղարաբաղի հակամարտության լուծմանն ու տարածաշրջանում խաղաղության վերահաստատմանը:

Նույն պատասխանատուն հիշեցրել է նաեւ Ֆրանսիայի դիրքորոշումը այդ հակամարտության լուծման հարցում: Դա այն դիրքորոշումն է, որը համընկնում է ԵԱՀԿ-ի սկզբունքներին, այսինքն, տարածային ամբողջականություն, ազգային ինքնորոշման հարգում, բայց նաեւ՝ աղակենտրոնացում: Դրանով փոխզիջումները կարող են ձեռք բերել կենտրոնից կախվածության ամենալայն չափով բուլացում, այլ խոսքով, ինչպես ընդունված է ասել, ամենալայն չափով ինքնավարություն:

Գուլուզադե. «Տարածաշրջանի իրողությունները խաղաղություն են թելադրում»

ԲԱԿՈՒ, 19 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Արտաքին քաղաքականության գծով Ադրբեջանի նախագահի պետխորհրդական Գուլուզադեն հայտարարել է, թե գոհ չէ, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման շուրջ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում անցկացվող բանակցությունները ձգձգվում են: Մեկնաբանելով հակամարտության կարգավորման խնդրում ներկա պահին ստեղծված իրավիճակը՝ Գուլուզադեն նշել է, որ երեք համանախագահների շահերը (դրանք են ԱՄՆ-ը, Ֆրանսիան եւ Ռուսաստանը) համընկնում են Ադրբեջանի շահերի հետ: Պետխորհրդականի խոսքերով, Հայաստանը, որը հակամարտության մեջ շատ էր հույս դնում Ռուսաստանի վրա, այն կարծիքին էր, թե Ռուսաստանը շահագրգռված կլինի, որ Հայաստանը դարձնի իր պատվարը ՆԱՏՕ-ի հետ առճակատման մեջ, սակայն, ըստ Գուլուզադեի, Ռուսաստանը ներկայումս նոր պետության փոխարկվելու գործընթաց է ապրում:

Ադրբեջանցի դիվանագետի կարծիքով, տարածաշրջանի իրողությունները խաղաղություն են թելադրում, որից հետո Ադրբեջանը հսկայական քայլերով առաջ կընթանա եւ կդառնա տարածաշրջանի գերիշխող երկիրը: Ադրբեջանի նախագահի պետխորհրդականը շաբաթ օրը կարճաժամկետ այցով մեկնել էր Վաշինգտոն, որտեղ ծրագրված էին նրա հանդիպումները ամերիկյան վարչակազմի ներկայացուցիչների հետ: Քննարկվելիք հարցերի թվում գլխավորը Ադրբեջանի արտաքին քաղաքական հրատապ խնդիրներն էին:

ՇՐՋԱՆ

Մուսաֆա Քալեմլին Բաքվում արտաղնեց ադրբեջանցիներին

19 ՄԱՐՏ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Ադրբեջան ժամանեց Թուրքիայի խորհրդարանի պատվիրակությունը Ազգային մեծ ժողովի նախագահ Մուսաֆա Քալեմլիի գլխավորությամբ: Մուսաֆա Քալեմլին այսօր նիստ ունեցավ Ադրբեջանի խորհրդարանում եւ մասնավորապես նշեց, որ Թուրքիան չի ճանաչի Ղարաբաղի խնդրի որեւէ լուծում, որը հիմնված չլինի Ադրբեջանի տարածքային ամբողջականության սկզբունքի վրա: Թուրքիան հանդես է գալիս հայկական զինված ստորաբաժանումների Ադրբեջանի տարածքից դուրս բերման, բոլոր փախստականների իրենց բնակության մշտական վայրեր վերադառնալու օգտին, որը թույլ կտա խաղաղություն եւ կայունություն ապահովելու տարածաշրջանում, ինչն իր հերթին հնարավորություն կստեղծի այնտեղ գտնվող բոլոր երկրների, այդ թվում նաեւ Հայաստանի արդյունավետ համագործակցության համար: Հանդիպեցին է Թուրքիայի խորհրդարանի ղեկավարը:

Վարդան Քեչիշյանը Մխիթարյան միաբանության նորընտիր աբբահայր

ՍՍՍԲՈՒԼ, 19 ՄԱՐՏ, ՆՏ. Ստամբուլի «Մարմարա» հաղորդում է, որ Վենետիկի Մխիթարյան Միաբանության հայրերն օրերս գերագույն ժողով գումարելով միաբանության գլխավոր աբբահայր են ընտրել Հայր Վարդան ծ. վրդ. Քեչիշյանին: Նորընտիր աբբահայրը ծնվել է Քեսաբում (Սիրիա)՝ 1933 թ.-ին: 1948թ.-ին մուտք է գործել Վենետիկի Ս. Ղազար կղզին՝ որպես ժառանգավոր, ուր միջնակարգ եւ երկրորդական ուսում ստանալով, 1958 թ.-ին մեկնել է Հռոմ՝ Հիսուսյան հայրերի Գրիգորյան համալսարան, ուր ստացել է իմաստասիրական եւ աստվածաբանական կրթություն: 1960 թ.-ին օծվել է կուսակրոն քահանա, մշտնջենական ուխտերով անդամակցելով Մխիթարյան միաբանությանը: Այնուհետեւ նորընծա աբեղայի կյանքը դարձել է նվիրում եւ առաքելական ու կրթական բեղուն գործունեություն: Նա աշխատել է Լիբանանում, Սիրիայում, Սեւրում, Փարիզում, Բուենոս Այրեսում:

ՀԱՄԱՌՈՏ

Առաջ ձյունը փակել է Հայաստանի ճանապարհները

ԵՐԵՎԱՆ, 19 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Մարտի 19-ին անսպասելի տեղացած ձյան պատճառով Հայաստանի նախալեռնային ու լեռնային շրջանների ճանապարհները գրեթե ամբողջությամբ դարձել են անանցանելի: Ինչպես տեղեկացրին ՀՀ տրանսպորտի նախարարության «Հայավտոճան» միավորումից, Հանրապետության հյուսիսի որոշ ճանապարհահատվածներ՝ Արթիկ-Ալագյազ, Թալին-Մարալիկ-Գյումրի, Աշոցք-Վրաստան, Գյումրի-Սպիտակ, Գյումրի-Ամասիա, Ամասիա-Աշոցք հատվածներն ամբողջությամբ փակ են ու անանցանելի: Այս հատվածներում ժամանակ առ ժամանակ փչում է բուք ու ձյունամրրիկ, իջնում մառախուղ: Դժվար անցանելի են Սեւանի, Վայքի եւ Մեղրիի լեռնանցքները, ինչպես նաեւ Արարատ-Ալագյազ-Սպիտակ, Իջեւան-Բերդ, Սիսիան-Գորիս, Երասխ-Եղեգնաձոր ճանապարհահատվածները:

Անցում ամառային ժամանակի

ԵՐԵՎԱՆ, 19 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ կառավարության 1996 թ. հոկտեմբերի 23-ի թիվ 338 որոշմամբ նախատեսվում է ՀՀ տարածքում անցնել «ամառային ժամանակի»: Մարտի 30-ին, ժամը 2-ին հարկավոր է ժամացույցի սլաքները մեկ ժամ առաջ տանել:

Թուրքիան «Կովկասի ժողովուրդների վեհաժողով»-ում

19 ՄԱՐՏ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Ռուսաստանի Պետդումայի փոխխոսնակ Միխայիլ Գուցերիեւը ԻՏԱՌ–ՏԱՍՍ-ին հայտնեց, որ մոտ ժամանակներս Պետդումայի աջակցությամբ ստեղծվելու է «Կովկասի ժողովուրդների վեհաժողով», որը ներառելու է Ռուսաստանի հարավը, Անդրկովկասը, Թուրքիան եւ մի շարք այլ երկրներ: Վեհաժողովում իրենց պետությունները կներկայացնեն խորհրդարանների խոսնակները, իսկ նիստերը կգումարվեն 3 ամիսը մեկ այն երկրների մայրաքաղաքներում, որոնք կդառնան այդ վեհաժողովի Անվտանգության խորհրդի անդամ: Իսկ Անվտանգության խորհուրդն իր հերթին ստեղծվելու է ազգամիջյան հակամարտությունները կանխելու նպատակով:

ՎԱՇԻՆԳՏՈՆ

Ռուսաստանը համակերպվե՞ց ՆԱՏՕ-ի ընդլայնմանը

19 ՄԱՐՏ, BBC: Հինգշաբթի եւ ուրբաթ օրերին Հելսինկիում ծրագրված Քլինթոնի եւ Ելցինի հանդիպման նախօրեին ԱՄՆ-ի պետքարտուղար Մադլեն Օլբրայթը Վաշինգտոնում գտնվող Ռուսաստանի արտգործնախարար Եվգենի Պրիմակովի հետ բանակցելուց հետո հայտարարեց, որ ՆԱՏՕ-ի ընդլայնման ծրագիրը կիրագործվի չնայած Ռուսաստանի առարկություններին: Օլբրայթի խոսքերով, Միացյալ Նահանգները մտադիր չէ սակարկել ՆԱՏՕ-ի անդամ դառնալու Կենտրոնական Եվրոպայի երկրների իրավունքը: «Արեւելյան Եվրոպայից ՆԱՏՕ-ի առաջին նոր անդամները չեն լինի վերջինները, քանի որ մենք մտադիր չենք բացառել Եվրոպայի ցանկացած ժողովրդավարական երկրների առաջարկում ՆԱՏՕ ընդունվելու հնարավորությունը», հայտարարեց Մադլեն Օլբրայթը: Դրան հետեւեց Ռուսաստանի նախագահի մամլո քարտուղար Սերգեյ Յաստրժեմբսկու հայտարարությունը, որն ասաց, թե Մոսկվան կդեմ է ՆԱՏՕ-ի ընդլայնման հարցին իր բացասական վերաբերմունքն ունենալու իրավունքը: Յաստրժեմբսկին ասաց սակայն, որ Ռուսաստանը հասկանում է, որ ընդլայնումը տեղի կունենա, ընդգծելով, որ Մոսկվան ցանկանում է ձեւակերպել իր հարաբերությունները ՆԱՏՕ-ի հետ:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Սահմանադրությունը օրենքից դո՞ւրս

Քննարկվում է ՀՀ Քրեական օրենսգրքի նախագիծը

Ազգային Ժողովի մարտի 19-ի նիստում 82 կողմով 1-ին ընթերցմամբ ընդունվեց ՀՀ օրենքի նախագիծը մահապատիժի դրույթաչափերի մասին: Արված հիմնական փոփոխության համաձայն, բռնի ներմուծման 10 տոկոս մահապատիժը իջեցվեց 0-ի, իսկ ալյուրի եւ այրաղացային արդյունաբերության արտադրանքի արտահանումը 0-ից հասավ 10-ի: Երեկվա նիստում 1-ին ընթերցմամբ ընդունվեց նաեւ մահապային սակագների մասին ՀՀ օրենքի նախագիծը: Առարկելով նախագծին Հերմինե Նաղդալյանը նկատեց, որ այս օրենքը ամենամեծ չափով հարվածելու է փոքր եւ միջին բիզնեսին: Նաղդալյանը նկատեց, որ եթե տնտեսություն չկա, ապա բյուջեի մասին խոսք լինել չի կարող:

Երեկվա նիստում սկսվեց ՀՀ Քրեական օրենսգրքի նախագծի քննարկումը: Ներկայացնելով օրենսգրքի գաղափարախոսությունը, ԱԺ դեսպանական հանձնաժողովի նախագահ Էդ Եգորյանը նշեց, որ միայն միջազգային օրինագծերը վավերացնելով առաջ չենք ընթանա: Եթե չլինեն համակարգային փոփոխություններ, ժողովրդավարացմանը միտված միջազգային դրույթները Հայաստանում չեն կարող գործնական կիրառում ունենալ: Եգորյանը նշեց, որ Հայաստանի դեպքերի համար կարեւորվում է եվրոպական իրավունքների չափանիշների ներմուծումն ու իրականացումը:

Այնուհետեւ օրենսգրքի նախագիծը 90 րոպեանոց ելույթով ներկայացրեց Միխայել Գրիգորյանը (նախկինում գլխավոր դատախազի տեղակալ, ներկայումս աշխատում է ՆԳ եւ ԱԱ համակարգում): Նա նշեց, որ նոր քրեական օրենսգիրք ընդունելու անհրաժեշտությունը վաղուց է հասունացել թե ներքաղաքական կյանքում, թե հասարակական գիտակցության մեջ: Միաժամանակ նշվեց, որ հիշյալ օրենսգիրքը «դատահրավական բարեփոխումների բաղկացուցիչ մասն է»: Գրիգորյանը տեղեկացրեց, որ ԱՊՀ օրինակելի քրեական օրենսգիրքը ուղեցույց է ծառայել, սակայն մի շարք հարցերում մենք շեղվել ենք այդ օրենսգրքից, թեպետ օրինակելի օրենսգիրքը ավելի խղճամիտ է եւ եվրոպամետ: Պարզվեց, որ օրինագրքի հիմքում դրված են օրինականության, դատախազական հսկողության, արդարության, մարդասիրության սկզբունքները: Սակայն, ըստ Գրիգորյանի, չի ամրագրվել օրենքի առաջ բոլոր խաղաքաղաքացիների հավասարության դրույթը: Ինչ վերաբերում է օրենսգրքում տեղ գտած մարդասիրության սկզբունքին, ապա, ըստ զեկուցողի, մարդասիրությունը բնավ էլ ամեն ինչ ներելու միտում չունի, այլ առաջնորդելու հասարակության եւ հանցանք կատարած անձանց իրավունքները: Այնուհետեւ Գրիգորյանն անդրադարձավ մահապատժի իրականացման խնդրին, նշելով, որ որոշ բացառիկ դատաքննիչների մահապատիժը օրենսգրքում տեղ չի գտել: Որպես օրինակ, նա մատնանշեց աշխարհի 35 երկրներ, ուր մահապատիժը վերացվել է, իսկ 27 երկրներ կողմնակից են, մահապատժի վերացմանը: Գրիգորյանը նկատեց, որ մահապատժի կիրառման օգտին բերվող ամենատարածված փաստարկը հանցագործության զսպումն է: Սակայն մահապատժի կիրառման դրական չի հանգեցնում հանցագործության նվազմանը:

Մահապատժի վերացման հարցը միանշանակ չընդունվեց դատավորների կողմից: Մասնավորապես, Խաչիկ Սաֆարյանը դեմ արտահայտվեց մահապատժի վերացման դեմ: Գրիգորյանը նկատեց, որ մահապատիժ իրականացնելը բնավ չի օգնելու տուժողին: Վիկտոր Դալլաքյանը նշեց, որ մահապատժի հարցը միանշանակ չի ընդունվի հասարակության կողմից, իսկ որպես խնդրի լուծում առաջարկեց մահապատժի վերացման հարցը դնել հանրաքվեի:

Օրենսգրքում սահմանվում են քրեական օրենսդրության խնդիրներն ու սկզբունքները, օրենքի ներգործությունը ժամանակի մեջ եւ տարածության վրա, քրեական դատապարտյալների ենթակա անձինք, ինչպես նաեւ, հանցագործությունը, հանցակցությունը, արարքի հանցավորությունը բացառող հանգամանքները, դատիճը, քրեական դատապարտյալներից եւ դատից ազատելը, համաներումը, ներումը, դատվածություն հասկացություններ եւ այլն: Օրենսգրքի նախագծի քննարկումը կշարունակվի հաջորդ նստաշրջանում:

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

«Սոցիալական պետություն» ոչ սոցիալական պետության մեջ

Դատգամավորական այս խումբը պաշտպանում է Բ. Սարգսյանի՞ թեկնածությունը վարչապետի պաշտոնում

Մարտի 19-ին ԱԺ-ում կայացավ նորաստեղծ «Սոցիալական պետություն» դատգամավորական խմբի մամլո ասուլիսը: Խմբի ստեղծման նախաձեռնողների թվում են «Բարեփոխումներ» խմբի մի քանի անդամներ, մասնավորապես ԱԺ սոցիալական հարցերի հանձնաժողովի նախագահ Գեղամ Ղարիբջանյանը, Վիկտոր Դալլաքյանը, ինչպես նաեւ ցայսօր որեւէ խմբում չընդգրկված դատգամավորներ («Բարեփոխումներից» նորաստեղծ խմբում են ընդգրկված 5 դատգամավորներ): Խմբի կազմավորումը որոշ առումով աղմկահարույց եղավ, քանի որ նախապես խմբում ընդգրկվելու դիմում գրած Լեւոն Թովմասյանը եւ Գեւորգ Բաղալյանը հրաժարվել են անդամակցելու մտից: Կանոնակարգի դատական հնգամուտ խմբի նախաձեռնողների «ջանքերով» անդամների 15 դարտադիր թիվը դահեղանելու համար խմբում ընդգրկվել են եւս 2 դատգամավորներ Գրիշա Հովհաննիսյանը եւ Էդիկ Մարտիրոսյանը:

Արդյո՞ք «Սոցիալական պետություն» խմբի կազմավորման դատճառ է հանդիսացել «Բարեփոխումներում» եղած հնարավոր տարաձայնությունները, մեր այս հարցին ի դատասխան խմբի նախագահ Ղարիբջանյանը նկատեց, որ որեւէ տարաձայնություն չի եղել «Բարեփոխումներ» գաղափարում էր հիմնականում տնտեսական հարցերով, իսկ այս խմբին մտահոգում են սոցիալական խնդիրները: Իսկ ինչպե՞ս են քվեարկել խմբի անդամները մասնավորապես ԱԺ-ի մասին օրենքի նախագծին: Ղարիբջանյանը նկատեց, որ ասուլիսին ներկա դատգամավորները (Զեմմա Անանյան, Վ. Դալլաքյան եւ Գ. Ղարիբջանյան) կողմ են քվեարկել օրենքի նախագծին: Իսկ Հ. Ահարոնյանը չի քվեարկել: Այդ առթիվ մենք մեր զարմանքը հայտնեցինք, քանի որ իր առջեւ սոցիալական խնդիրների լուծման նդատակները դնող դատգամավորական խումբը կողմ է քվեարկել որոշակի սոցիալական լարվածություն առաջացնող օրենքի նախագծի ընդունմանը:

Ինչ վերաբերում է լրագրողի այն հարցին, թե նոր վարչապետի նշանակման առիթով նախագահ Տեր-Պետրոսյանի հետ խորհրդատվական հանդիպման ժամանակ «Սոցիալական պետությունն» ո՞ւմ թեկնածության օգտին է հանդես եկել, Գ. Ղարիբջանյանը նշեց, թե խմբի տեսակետն է, որ վարչապետը դետք է քաղաքական դեմք լինի, որը ճանաչում ունենա նաեւ ԱՊՀ-ում: Ղարիբջանյանը հրաժարվեց որեւէ անուն տալուց, առաջարկելով լրագրողներին հետեւել իրենց դրոֆեսիոնալիզմի վրա, եւ մտածել, թե ում նկատի ունի խումբը: Այսօրինակ դատգամավորական ոճրուսը լուծելիս մենք եզրահանգման եկանք որ «Սոցիալական պետությունը» դատշտանում է Բաբկեն Սարգսյանի թեկնածությունը վարչապետի դատշտոնում:

Դատասխանելով լրագրողների հարցերին նոր քաղաքական կուսակցություն ստեղծելու հեռանկարի հնարավորության մասին, Ղարիբջանյանը նշեց, որ «ՀՀՇ-ից մինչեւ կոմկուս բաց տարածք կա, որը ոչ ոք չի զբաղեցնում»: Սոցիալական հիմնախնդիրների դատճառներից մեկը Ղարիբջանյանը համարեց այն, որ «ժողովրդի առջեւ բոլոր դռները փակ են», եւ ավելացրեց, որ սոցիալական խնդիրների լուծման բանալին ազգաբնակչության զբաղվածության հարցը լուծելն է:

Իսկ խումբը ընդդիմությո՞ւն է, թե՞ ոչ, ի դատասխան այս հարցի Վիկտոր Դալլաքյանը նշեց, որ իրենք ոչ թե ընդդիմություն են, այլ ընդդիմախոս:

Արդյոք Գ. Ղարիբջանյանը «Բարեփոխումներ» խումբը չօգտագործե՞ց հանձնաժողովի նախագահի ընտրվելու համար, ապա հրաժարվեց այդ խմբից, այս հարցին դատասխանելիս Ղարիբջանյանը նկատեց, որ դատգամավորներն իրեն ձայն տվել կամ չեն տվել որպես Գեւորգ Ղարիբջանյանի: Ըստ այդմ նա մերժեց այն տեսակետը, թե իրեն հանձնաժողովի նախագահ է դարձել «Բարեփոխումների» աջակցությամբ:

Ն. Ս.

ՍԱՍՈՒ

«Երեւանյան օրերը» մայիսից կդառնա օրաթերթ

ԵՐԵՎԱՆ, 19 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏՈՊԱՆ: «Երեւանյան օրեր» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Միխայել Հայրապետյանը, որը վերջերս երկու անհայտ անձանց կողմից դաժանորեն ծեծի էր ենթարկվել, դեռեւս լիովին չի աղաչինվել, սակայն, ինչպես ինքն է խոստովանում, իր ինքնազգացողությունն ասիճանաբար նորմալանում է:

«Նոյյան տաղան»-ի թղթակցի հետ զրույցում Մ. Հայրապետյանը հայտնեց, որ մնում է նույն կարծիքին, ինքը ծեծի է ենթարկվել իշխանական որեւէ թեւի դատվերով: Գործի հետաքննությունը շարունակվում, է եւ ներքին գործերից Մ. Հայրապետյանը հավաստիացվել է, որ հանցագործները անդատժման կգտնվեն:

«Երեւանյան օրեր»-ի գլխավոր խմբագիրը տեղեկացրեց նաեւ, որ թերթը չի դավաճանի իր սկզբունքներին, շարունակելով մնալ անկախ ու ազատախոս: Տեղեկացվեց նաեւ, որ առաջիկա ամսից թերթը լույս կտեսնի շաբաթական երկու անգամ, իսկ մայիսից կդառնա օրաթերթ:

Նոր հանդես

Երեւանում լույս տեսավ նոր հանդես «Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի»: Եռամսյա հանդեսի անդրանիկ համարը նվիրված է նույնանուն եկեղեցու 150-ամյակին: Գլխավոր խմբագիրն է վերադասվելի Ռընե Լեւոնյանը, որ ստորագրել է խմբագրական հոդվածը: «Մեր հանդեսի նդատակն է, գրում է վերադասվելին, ծանոթացնել Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանում կատարվող գործունեությունը, ինչպես նաեւ ավետարանական եկեղեցիների կյանքին Հայաստանում եւ Սփյուռքում»:

Նկարագրվող հանդեսի նյութերի մեծ մասը դատսում է ՀԱԵ-ի 150-ամյակին նվիրված տարբեր հանդիսությունների մասին, ներկայացնում այդ առթիվ Ամենայն հայոց հայրադետ Գարեգին Ա-ի ողջույնի խոսքն ու նամակը, վերադասվելի Մովսես Ճամդաղյանի խոսքը, ՀՀ կոմի գործերի դեսական խորհրդի նախագահի դատասխանատու Լ. Սուջյանի նամակը եւ այլն: Հանդեսի հրատարակիչն է Հայ ավետարանչական ընկերակցությունը:

ՔՐԵԱԿԱՆ

Կաբառ վերցնելիս ձերբակալվել է դատախազության ննիչը

ԵՐԵՎԱՆ, 19 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ ՆԳ եւ ԱԱ նախարարության անվտանգության մարմինների կողմից ձեռք առնված միջոցառումների արդյունքում, մարտի 18-ին իր աշխատասենյակում կաբառ վերցնելիս ձերբակալվել է Երեւան քաղաքի Շահումյանի շրջանի դատախազության ննիչ Գեւորգ Ստեփանյանը:

Ինչպես Արմենդրեսին տեղեկացրին ՆԳ եւ ԱԱՆ լրատվության եւ մամուլի հետ կապերի վարչությունից, նա 2000 ամերիկյան դոլարի դիմաց խոստացել էր, այսպես ասած, մեղմ վերաբերմունք ցուցաբերել իր -վարույթում գտնվող գործով անցնող մեղադրյալի նկատմամբ:

Հարուցված է քրեական գործ, որը վարում է ՀՀ ԱԳ եւ ԱԱՆ ննչական վարչությունը:

ԵՐԵՎԱՆ

Մկրտիչ Մեղավորյանի հարցաքննությունը ձգձգվում է

«Սեպտեմբերի 25/1» դատաքննության հերթական նիստում երեկ ցուցմունքները շարունակեց ամբաստանյալ Մկրտիչ Մեղավորյանը: ՆԳՆ ննիչները Մեղավորյանին հարցրել են ոմն Վլեի (Վոլոդյա) գրոհայինների 150 հոգանոց խմբի մասին, հետո այդ թիվն իջեցրել 100-ի, 50-ի եւ «կանգնել» 25-ի վրա, դահանջել են խոստովանել, որ Վլեն իրեն առաջարկել է գինված տղաների մի խումբ՝ ընդդիմության առաջնորդների անվտանգությունն ապահովելու համար: Հետաքրքրվել են նաեւ Կիմ Բալայանի, Դավիթ Վարդանյանի եւ Վազգեն Մանուկյանի զույգի բռվանդակությամբ, որին, իբր, ներկա է եղել ամբաստանյալը, ցույց են տվել 4 տեսաժապավեն, սպառնալով, թե կսպանեն որեւէ մեկում իրեն տեսնելու դեպքում, սակայն, իհարկե, չեն տեսել (քանզի Մեղավորյանը ողջ-առողջ է եւ ցուցմունքներ է տալիս դատարանում): Ամբաստանյալին ճանաչման են տարել 9 հոգու՝ Արա Սահակյանի քարտուղարուհու, ոստիկանների, կարմիր բերետավոր զինվորների եւ ԱԺ աշխատակազմի անդամների հետ, սակայն անօգուտ՝ վերջիններս նրան չեն ճանաչել:

Նշված եւ մի շարք այլ հարցերի առնչությամբ նախաքննական ցուցմունքներն, ըստ Մեղավորյանի, 90 տոկոսով ննիչների ստեղծագործությունն են եւ կորզվել են հարկադրանքով, երբեմն նույնիսկ խաբեությամբ: Ցուցմունքներում, օրինակ, նշված են ինչոր տղաների անուններ, որոնց ծեռին Մեղավորյանն, իբր, ատրճանակներ է տեսել: Դատավորի հարցին, ովքեր են դրանք, ամբաստանյալը դատասխանեց. «Ասացին, մի բան գրի, էլի, անուն չգիտե՞ս»:

Դատավորի եւ դեսական մեղադրողի՝ ամբաստանյալի նախաքննական ցուցմունքների ճշմարտացիությունն ստուգող հարցերից հետո Մեղավորյանի դատադատման Ժ. Շահարյանի միջնորդությամբ դատը հետաձգվեց մինչեւ մարտի 24-ը: Այդ ընթացքում Շահարյանն իր դատադատանյալի հետ կհստակեցնի Մեղավորյանի հետագա դատադատական մարտավարությունը:

ԼԻԼԻԹ ԴՈՂԼՈՍՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության է տալիս
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թաղ 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Տնօրէն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային
ծառայութիւն / 581841
Apple Macintosh
համակարգչային շարուածը
«Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» դարտադիր է
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՊԱՏԱՍԽԱՆ

ԴԱՐԱԲԱՂ

ԼՂՀ նախագահը հաստատեց ԱԺ որոշումը

ԼՂՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը հաստատել է ԼՂՀ ԱԺ համաղգային խորհրդարանի եւ նրա աշխատակազմից «մշտապես գործող» բառերը հանելու վերաբերյալ: Այդ մասին «Ազգի» թղթակցին տեղեկացրին ԼՂՀ ԱԺ-ից: Այսուհետ ԼՂՀ խորհրդարանն իր նիստերը կգումարի ըստ անհրաժեշտության:

Գաղթականները պատրաստ են վերադառնալու

Այսօրվա դրությամբ ՌԴ հյուսիսային Կովկասի Պյատիգորսկ, Ստավրոպոլ, Կիսլովոդսկ, Արմավիր, Գելենջիկ, Գեորգիևսկ, Ժելեզնովոդսկ, Եսենտուկի, Կրասնոդար, Անապա եւ այլ քաղաքներում բնակվում են շուրջ 100.000 արցախցիներ, գանձակցիներ, հակամարտության ընթացքում Ադրբեջանի հայաբաս շրջաններից գաղթած հայազգի քաղաքացիներ: Այդ մասին «Ազգի» թղթակցին տեղեկացրեց Կրասնոդարի երկրամասի հայ համայնքի օրերս Ստեփանակերտ ժամանած ներկայացուցիչը: Նրա վկայությամբ, վերոհիշյալ թիվը մեծաթիվ պայմանական է, իրականում հայերը հիշյալ բնակավայրերում ավելի մեծ տոկոս են կազմում: Զգալի թիվ են կազմում տղամարդիկ, որոնք Ռուսաստան են մեկնել աշխատանք փնտրելու: Համայնքի ներկայացուցչի համոզմամբ, գաղթականները պատրաստ են վերադառնալու հայրենիք, եթե հայկական իշխանությունները պայմաններ ստեղծեն ԼՂՀ-ում եւ ՀՀ-ում բնակություն հաստատելու եւ աշխատանք ստանալու համար:

ՎԱՀԵԱՆ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Արամ Աբրահամյանը տրելու է միանգամայն նոր «Առավոտ»

ԵՐԵՎԱՆ, 19 ՄԱՐՏ, ՓԱՍՏ: Մոտ մեկ ամսից «Առավոտ» օրաթերթը կվերահրատարակվի արդեն նոր ծավալով 16 էջով, չնայած թերթի գլխավոր խմբագիր Արամ Աբրահամյանի փակվելու առթիվ արված բազմաթիվ հավաստիացումներին, թե թերթը սպառել է իրեն, կատարել իր առաքելությունը եւ այլն: Պատասխանելով «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայության թղթակցի հարցին, նա ասաց.

– Ես շարունակում եմ դնդել, որ նախկին ստեղծագործական, տեխնիկական որակով «Առավոտը» վերականգնելն անհնարս է: Մենք դատապարտվում ենք տալ միանգամայն նոր մակարդակի թերթ, եթե դա չհաջողվի, մենք նորից կփակենք:

– Հանրահայտ է, որ «Առավոտի» գործունեության նախորդ շրջանում թերթի հետեւում Վանո Սիրադեղյանն էր, իսկ ֆինանսավորումն իրականացվում էր Սուրիայան եղբայրների միջոցներով:

– «Առավոտի» վերաբացումը որոշ վերլուծաբաններ կապում էին վարչապետի հրաժարականից հետո ստեղծված իրավիճակի հետ, իսկ նախաձեռնությունը վերագրեցին Լեւոն Տեր-Պետրոսյանին: Այսպե՞ս է:

– Չէ, դա կատարյալ անհեթեթություն է: Լեւոն Տեր-Պետրոսյանը, եթե ուզում է թերթ պահել, թող զարգացնի, լավացնի «Հայաստանի Հանրապետությունը» եւ «Ռեսպուբլիկա Արմենիան»: Դա շատ լավ խնդիր կլինի մեր պետության եւ մեր ղեկավարության առաջ:

– Իսկ անձնապես Ձեզ համար ինչո՞վ է պայմանավորված «Առավոտ» վերադարձը: Չէ՞ որ խոսվում էր, որ շուտով պետք է գրանցվեն Տեր-Պետրոսյանին: Այսպե՞ս է:

– Չէ, դա կատարյալ անհեթեթություն է: Լեւոն Տեր-Պետրոսյանը, եթե ուզում է թերթ պահել, թող զարգացնի, լավացնի «Հայաստանի Հանրապետությունը» եւ «Ռեսպուբլիկա Արմենիան»: Դա շատ լավ խնդիր կլինի մեր պետության եւ մեր ղեկավարության առաջ:

– Իսկ անձնապես Ձեզ համար ինչո՞վ է պայմանավորված «Առավոտ» վերադարձը: Չէ՞ որ խոսվում էր, որ շուտով պետք է գրանցվեն Այժմ նույնպես հովանավորները նո՞ւյն են մնացել:

– Ոչ, պահպանելով շատ ջերմ բարեկամական հարաբերություններ թե Սուրիայան եղբայրների հետ, թե մանավանդ Վանո Սիրադեղյանի հետ, որին ես շարունակում եմ անչափ հարգել, ֆինանսավորումները փոխվելու են: Դրանք կլինեն ավելի շատ մարդիկ, դրանք կլինեն եւ Սփյուռքի եւ Հայաստանի գործարար շրջանակների ներկայացուցիչներ, եւ նրանք կլինեն նույնիսկ ավելի չեզոք քան Սուրիայաններն քաղաքական առումով:

– «Առավոտի» վերաբացումը որոշ վերլուծաբաններ կապում էին վարչապետի հրաժարականից հետո ստեղծված իրավիճակի հետ, իսկ նախաձեռնությունը վերագրեցին Լեւոն Տեր-Պետրոսյանին: Այսպե՞ս է:

– Չէ, դա կատարյալ անհեթեթություն է: Լեւոն Տեր-Պետրոսյանը, եթե ուզում է թերթ պահել, թող զարգացնի, լավացնի «Հայաստանի Հանրապետությունը» եւ «Ռեսպուբլիկա Արմենիան»: Դա շատ լավ խնդիր կլինի մեր պետության եւ մեր ղեկավարության առաջ:

– Իսկ անձնապես Ձեզ համար ինչո՞վ է պայմանավորված «Առավոտ» վերադարձը: Չէ՞ որ խոսվում էր, որ շուտով պետք է գրանցվեն ղեկավարի պաշտոնը:

– Ես նախ չէի նախադատարկվել, որովհետեւ լուրջ խոսակցություն, պաշտոնական առաջարկ դրա մասին չի արվել, իսկ այսօր, եթե այս պահիս ինձ առաջարկեն հեռուստատեսության ղեկավարել, այս պահիս, այսօրվա դրությամբ, ես կմերժեմ այդ առաջարկը, որովհետեւ ինձ պարզ չէ, ինչպես է դասավորվելու գործադիր իշխանության ուղղահայացը, այսինքն, ես չգիտեմ, թե ով է լինելու Հայաստանի վարչապետը, եւ հաստատեմ մարդկանց դեմքում ես կհամաձայնվեմ պետական ծառայության այնպիսի մարդկանց հետ, ինչպիսին է Արմեն Սարգսյանը:

Մասնավոր ավտոբուսները նպաստում են ստվերային տնտեսությանը

Կառավարության համաղգային որոշմամբ, քաղաքային (բացառությամբ տախիների) եւ մերձքաղաքային (մինչեւ 50 կմ) տրանսպորտով անվճար երթեւեկելու իրավունք ունեն բոլոր հաշմանդամները, պատերազմի մասնակիցները, բռնադատվածները, ներքին գործերի, սպայական եւ շարքային անձնակազմը, պետական հովանավորության տակ գտնվող ծերանոցների բնակիչները, իսկ զեղչերով՝ ուսանողները, աշակերտները, չաշխատող թոշակառուները, աշխատանքի վետերանները (վերջիններիս համար սահմանված են զեղչերի համաղգային տոկոսադրույքներ): Նաեւ կա որոշում, որով վերոհիշյալ կատեգորիայի ուղեւորները կարող են երթեւեկել մասնավոր ավտոբուսներով: Այս մասին բազմիցս ասվել է մամուլով եւ զանգվածային այլ լրատվամիջոցներով: Բայց վարորդների գրեթե մեծամասնությունը շրջանցում է օրենքը, տեղիք տալիս տհաճ տեսարանների եւ տարաձայնությունների: Վերջին օրերին նման իրավիճակներ եղել են «3 38-15 АР» թիվ 28 Նորքի զանգված-Բարեկամություն, «83-06 АРА» թիվ 51, «А 41-84 АД», «Н 92-73АР», «06-12 АДУ» մ. երիտասարդական-Նորքի զանգված ավտոբուսներում: Թերեւս հատկանշական էր վերջինը՝ 06-12 АДУ ավտոբուսի վարորդը ուղղակի հարձակվեց ուղեւորի վրա, երբ վերջինս ցույց տվեց հաշմանդամության կարգի մշտականը, խլեց ձեռից, անպատվեց վերջին խոսքերով, հայտարարեց, որ օրենքն իրեն չի դեպահրում:

Խնդրին հետամուտ դիմեցի տրանսպորտի եւ հաղորդակցության նախարարություն: Ուղեւորների փոխադրման վարչության գլխավոր ինժեներ Սուրեն Բուռնուսուզյանը կրկին հաստատեց, որ մշտականներն անցնում են տրանսպորտային բոլոր միջոցներում, բացառությամբ տախիների եւ միկրոավտոբուսների (ՌԱՖ), եւ նշեց, որ նման դժգոհությունների դեպքում ուղեւորները պետք է դիմեն նախարարություն կամ զանգահարեն 56-33-91 հեռախոսահամարով: Երբուղի դուրս եկած որոշ մեքենաներ խաղաղապահների ենթակայությունում եւ նախարարության ու խաղաղապահների կողմից արտոնագրված մեքենաների վրա փակցված են կապույտ եւ կարմիր տարբերանշաններ համաղգային վերտառությամբ:

Այն հարցին, որ կառավարության կողմից մասնավոր ավտոբուսներին

միգուցե որոշ փոխհատուցում տրվեր, քանի որ վերջիններս պնդում են, թե պետությունից ոչինչ չեն ստանում մեքենայի ծախսերը հոգալու համար, իսկ փոխարենը անվճար ուղեւոր են փոխադրում, պրն Բուռնուսուզյանը նշեց, որ մասնավորը ճիշտ չէ, քանի որ պետական մեքենաները օրական պետությանը բարձր հարկեր են մուծում, մասնավորը միայն արտոնագիր ստանալու համար է մուծում, իսկ մնացած գումարները՝ գրպանում:

Քաղաքապետարանի առեւտրի եւ սպասարկումների բաժնի պետի տեղակալ Աշոտ Ղազարյանը նշեց, որ ոչ պետական տրանսպորտային միջոցները կարգավորվում են կենտրոնական դիսպետչերական ծառայության կողմից, քաղաքապետարանը պետավտոտեսչության հետ համատեղ կատարում է ստուգումներ, արձանագրվում են անօրինական գործող մեքենաները, ակտավորվում եւ երթուղուց դուրս են հանվում: Հարցի ամբողջական լուծման համար մշակվել է նոր մեխանիզմ, որը հավանաբար կկիրառվի ապրիլի 1-ից: Երեւան քաղաքում ոչ պետական տրանսպորտային սպասարկումներ կատարել ցանկացող սուբյեկտները ընտրվում են մրցութային կարգով, որով սահմանվում են վարորդի պարտականությունները ու կատարման մեխանիզմները, դրանց չկատարման երեք դեպքում արձանագրվելու դեպքում մեքենան ուղեգծից կհանվի: Ասենք, որ ստվերային տնտեսության օղակներից են նաեւ ոչ պետական տրանսպորտային միջոցները: Լավ կլիներ, որ հարկային մարմինները չանտեսեին, քանի որ երեկոյան ժամերին հատկապես երիտասարդական-Նորքի զանգվածներ երթուղու ավտոբուսի վարորդներն ուղեվարձը 50 դրամից բարձրացնում են 100, կրկնակի թանկացնում, բայց պետբյուջեի նկատմամբ իրենց պարտավորությունները անտեսում են:

ԱՐԱԲՈ ՍԱՖԱՐՅԱՆ

ԱՏՈՄԱՅԻՆ

ՄԱԳԱՏԷ-ն իրականացնում է ռադիացիոն անվտանգության բարձրացման ծրագիր

ԵՐԵՎԱՆ, 19 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ներկայումս Հայաստանում իրականացվում է ՄԱԳԱՏԷ-ի (Ատոմային էներգետիկայի միջազգային գործակալություն) բժշկության, գյուղատնտեսության, գիտության եւ արդյունաբերության բնագավառներում օգտագործվող ռադիոակտիվ նյութերի եւ ռադիոակտիվ թափոնների ռադիոակտիվ անվտանգության բարձրացմանը եւ ենթակառուցվածքի ամրապնդմանն ուղղված ծրագրի երկրորդ փուլը:

ՄԱԳԱՏԷ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրով, որը Հայաստանում սկսել է իրականացվել 1996 թվականից եւ հաշվարկված է հինգ տարվա համար, նախատեսվում է շրջակա միջավայրի դոզիմետրական հսկման համակարգի ամրապնդում եւ կատարելագործում բժշկական ճառագայթահարման ժամանակ, ռադիացիոն վթարների կանխարգելման հետ կապված հարցերի լուծում: Ներկայումս ողջ հանրապետությունում իրականացվում են ռադիոակտիվ նյութերի գույքագրման աշխատանքներ: ենթադրվում է, որ ՄԱԳԱՏԷ-ի պահանջներին համապատասխան ռադիոակտիվ նյութերի ցանկը կազմելու աշխատանքը կավարտվի այս տարվա հունիսին:

Ծրագրի շրջանակում ՄԱԳԱՏԷ-ի փորձագետներն այցելել են մի շարք օբյեկտներ, որտեղ գտնվում են այդ նյութերը, մասնավորապես հիգիենայի եւ համաճարակաբանության հանրապետական կենտրոն, ինչպես նաեւ Երեւանի եւ Գյումրիի սանիտարա-համաճարակաբանական խաղաղային կայաններ: Ինչպես նշեց նախագծի իրականացման եվրոպական գրասենյակի տարածաշրջանային ղեկավար, ՄԱԳԱՏԷ-ի փորձագետ Ալեանդրո Բիլբաոն, կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ այդ օբյեկտների նյութատեխնիկական բազայի վիճակը չի համապատասխանում արդի պահանջներին:

«Նոյյան տապան» գործակալության թղթակցի հետ զրույցի ժամանակ պրն Բիլբաոն հայտարարեց, որ ծրագրի շրջանակում պլանավորվում է Հայաստանին համապատասխան օգնություն ցուցաբերել ռադիացիոն անվտանգության բարձրացման հարցերի վերաբերյալ օրենսդրության նախապատրաստման, անհրաժեշտ սարքավորումներով ապահովման բնագավառում: Բացի այդ, գոյություն ունի հայ մասնագետների պատրաստման, ներառյալ ստաժավորման, եւ սեմինարների անցկացման ընդարձակ ծրագիր:

Պրն Բիլբաոն տեղեկացրել է նաեւ, որ դա ամենախոշոր ծրագիրն է, որ ներկայումս իրականացնում է ՄԱԳԱՏԷ-ն: Այն իրականացվում է աշխարհի 53 երկրներում, այդ թվում Արեւելյան Եվրոպայի եւ նախկին ԽՍՀՄ 11 երկրներում: Մեկ երկրում ծրագրի իրականացման համար տարեկան տրամադրվում է միջինը 80-100 հազար դոլար:

ՍՈՒՍԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Գյումրի. Պաշտոնապես գրանցված 31003 գործազուրկ

Գյումրիի բնակչության զբաղվածության կենտրոնի տվյալներով, կենտրոնում հաշվառվել են աշխատանք փնտրող 31003 քաղաքացիներ, որոնցից 22750-ը՝ կանայք: Մինչդեռ տարվա սկզբից հնարավոր է եղել աշխատանքի տեղավորել ընդամենը հինգ հոգու: Կենտրոն դիմած քաղաքացիներից գործազուրկի կարգավիճակ է ստացել 30243-ը: Հասկանալի է, սա միայն պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվն է եւ չի արտահայտում իրական պատկերը: Հ. Ս.

ՎԱՆԱՁՈՐ

Ե՞րբ կկատարվեն խոստումները

Վանաձորի շինարարության բնագավառի շուրջ 300 բանվոր-ծառայողներ անհամբերությամբ էին սպասում մարտի 18-ին: Այս օրը նախապես տրված խոստման համաձայն պետք է նրանց տրվեր դեռեւս 95 թ. սեպտեմբերից չվճարված աշխատավարձի պարտքերը: Ինչպես տեղեկացանք, մինչ այդ արդեն «Բազում» ՓԲԸ-ի ղեկավարությունը համաղգային միջոցներ հայթայթելով կարողացել էր մարել այդ պարտքերի հիմնական մասը եւ պատրաստ է դեռեւս չվճարված 800 հազար դրամ պարտքը հատուցել բանվորներին կանխիկ դրամի փոխարեն առաջարկելով շինանյութեր: Մինչդեռ «Վանշին» ՓԲԸ-ում աշխատավարձի կուտակված պարտքերը վճարելու ուղղությամբ էական փոփոխություն տեղի չի ունեցել: Այդ իսկ պատճառով, մարտի 18-ի առավոտյան դարձյալ բողոքող մարդկանց բազմություն է հավաքվել ընկերության գրասենյակի առջեւ: Համոզվելով, որ այդ օրն էլ դատարկաձեռն են վերադառնալու, նրանք փորձեցին օգնության համար մեկ անգամ եւս դիմել Լոռու մարզպետարան: Մարզպետարանը, ինչպես հայտնի է, չունի ճյուղային ազդեցության այն իրավական դաշտը, որի շնորհիվ կարողանա լուծում տալ առաջադրվող հարցերին: Հավաքվածներին հանգամանորեն բացատրելով ստեղծված կացության դժվարությունները, Լոռու մարզպետ Հովհաննես Մաշինյանը առաջարկեց սպասել ՀՀ կառավարության ներկայացուցչին: Հակառակ դեպքում, նա խոստացավ հանդիպության նախապատրաստել ստեղծված իրավիճակին:

ՀՀ նոր կառավարության քաղաքաշինության նախարարության ներկայացուցիչ Վ. Սարգսյանը, որը միեւնույն ժամանակ հանդիսանում է «Վանշին» ՓԲԸ-ի խորհրդի նախագահ, մայրաքաղաքից դարձյալ դատարկաձեռն էր եկել: Հայտնի դարձավ, որ մեկուկես տարի չվճարված աշխատավարձերի մարման համար վերջին ժամկետում էլ խոստումները չկատարվեցին: Ինչպես հավաստիացրեց պրն Սարգսյանը, նախարարությունում միջոցներ են ձեռնարկում հարցի լուծման համար եւ դեմ չեն «Վանշին» ՓԲԸ հիմնական միջոցների օտարման բանվոր-ծառայողների պարտքերը մարելու համար պայմաններ ստեղծելուն: Խանգարող հանգամանքը, ըստ նրա, կառավարության որոշմամբ սեփականաշնորհման ենթակա օբյեկտների ունեցվածքի օտարման նկատմամբ գոյություն ունեցող արգելքն է: Օրվա երկրորդ կեսին մարզպետի աշխատասենյակում տեղի ունեցավ խորհրդակցություն: Հ. Մաշինյանը մեկ անգամ եւս հիշեցրեց դեռեւս 95 թ. օգոստոսի 27-ին ՀՀ կառավարությանը ներկայացրած իր նամակը, որում մտահոգություն էր հայտնում «Վանշինում» ստեղծված իրավիճակի մասին: Առաջացած պարտքերի հիմնական պատճառը «Վանշինի» ղեկավարության ոչ բանիմաց աշխատանքն է եւ պայմանագրային խախտումների պատճառով Համաշխարհային բանկի կատարած ֆինանսական տուժագրումները: Բանվոր-ծառայողներին չվճարած աշխատավարձերի պարտքերն ամբողջությամբ մարելու համար նոր լրացուցիչ ժամանակ պահանջվեց: Նախարարության ներկայացուցիչը պարտավորվեց «Վանշինի» հիմնական միջոցներից գրավ դնելու միջոցով գտնել ֆինանսավորման աղբյուրներ եւ փակել շուրջ 11 մլն դրամի հասնող աշխատավարձի պարտքերը: Պրն Մաշինյանը խոստացավ ամեն կերպ աջակցել այդ գործին:

Երեկ, մարտի 19-ին, երկրորդանգամն էին շարունակվում այդ ծրագրի իրականացման մասնակցության մասին աշխատանքները: Մնում է հուսալ, որ շինարարներն այս անգամ էլ հուսահատ չեն լինի:

ՄԱՐԳԵՐԻՏ ՄԻՍԱԿՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

հակաճառություն

Ֆաքսով Երեւան են ուղարկել 1997 թ. փետրվարի 26-ի «Նեզավիսիմայա գազետա» թերթի մի կտրուածք՝ յոթանասուն տողանոց փոքրիկ հոդված, որի խորագիրն է «Խոջալուի ողբերգության հինգերորդ տարեդարձը», իսկ վերնագիրը՝ «Կատարվածի մեղավորներն առ այսօր պատժված չեն»: Կարդացի ու մտածեցի, որ հեղինակի բերած թվերը կարելի էր հեշտությամբ ավելացնել մի քանի անգամ, եթե ոչ՝ ավելի: Եվ այս դեպքում բանն այնքան այն չէ, որ բացակայում է ժամանակին տխրահռչակ «գլավլիտը» կամ ստուգման բյուրոն, որքան առկա է ցանկացած ցուցանիշների արժեզրկում՝ առավել ես, երբ խոսքը մարդկանց կյանքի մասին է: Ես հեռու եմ դրա համար հեղինակին կամ թերթին մեղադրելու մտից: Մանավանդ որ, հենց նման տվյալներ տպագրվել են տարբեր հրատարակություններում: Նշված նյութի մեջ ընդգծվում է, թե մավոր, այդ ժամանակ Խոջալուում կային ընդամենը չորս հարյուր խաղաղ բնակիչներ: Իսկ «ՆԳ»-ի հրապարակումից տեղեկանում ենք, որ գյուղում սպանվել էր 500 մարդ, հազարավոր մարդիկ վիրավորվել էին, հազարավորները՝ անհետ կորել: Եվ որպեսզի «վիճակագրությունը» ճշմարտանման թվա, ավելացնում են՝ «այդ թվում՝ 106 կին, 33 փոքրահասակ երեխա, 76 անչափահաս երեխա»: Հատկանշական է, որ հենց նույն «Նեզավիսիմայա գազետան» 1992 թ. ապրիլի 2-ին, այսինքն Խոջալուի կրակակետը վերացնելուց մեկ ամիս անց, Մութալիբովի խոսքերին հիմնվելով, գրեց. «Հայերը թողել են այն միջանցքը, որով մարդիկ կարող էին դուրս գալ»: Այդ դեպքում նրանց (հայերին–Զ. Բ.) ինչի՞ն է պետք կրակել (ադրբեջանցիների–Զ. Բ.) վրա: Հատկանշական են Ադրբեջանի նախագահի նաեւ այլ խոսքերը՝ նույն «ՆԳ»-ում. «Ի դեպ, այդ ընթացքում ես խոսել եմ ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահի՝ Մկրտչյանի հետ. «Դուք գենքին ել փռել հազարավոր մարդկանց, թույլ տվեք մեզ դուրս բերել դիակները»: Բայց նա պատասխանեց, որ ոչ մի դիակ չպետք է լինի: Նրանց (հայկական կողմի–Զ. Բ.) մոտ են մեր մարդիկ, որոնց կերակրում են, թեպետ պարենն իրենց էլ չի հերիքում, եւ պատրաստ են բաց թողնելու իրենց պատանդների դիմաց...»

Ի հաստատումն Մութալիբովի ասածի, կարելի է ցույց տալ Խոջալուի օրերին լենինգրադցի լրագրող Սվետլանա Կուլչիցկայայի նկարահանած հեռուստակադրերը: Մի խումբ խոջալեցիներ (հիմնականում կանայք եւ երեխաներ) Սվետլանային պատմում են, թե ինչպիսի ուխտադրժությամբ են իրենց լքել «օմոնականները», եւ ինչպես են իրենց վերաբերվել հայերը՝ կիսելով իրենց հետ վերջին կտոր հացը: Դժվար չէ կռահել, ինչո՞ւ հենց հինգ տարի անց լրագրողը «ՆԳ»-ում գրում է, թե զինված հայերը դիմահար գնդակահարում էին անզեն ադրբեջանցիներին, թե հայկական կազմավորումները սկսել են Խոջալուի զանգվածային գրոհը՝ «Ստեփանակերտում տեղակայված նախկին ԽՍՀՄ 4-րդ բանակի 366-րդ մոտոհրաձգային գնդի կրակային եւ տեխնիկական աջակցության ներքո»:

Նման կեղծարարությունը հենց այսօր է անհրաժեշտ, քանի որ միանման ինֆորմացիաների մի ամբողջ հորձանք է տեղում այն մասին, թե իբր Ադրբեջանը, ինչպես նշվում է «ՆԳ»-ի մեկ այլ հրապարակման մեջ (1997 թ. մարտի 5-ի), «անհանգստացած է Ռուսաստանի եւ Հայաստանի ռազմական դաշինից, մասնավորապես, հայկական տարածքում ռուսաստանյան ռազմական հենակայանների առկայությունից»: Սույն հրապարակումից մեկ օր անց Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւը «Օբշայա գազետային» տված հարցազրույցում նշում է, թե ինքը բացասաբար է վերաբերվում Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ ռազմական դաշինք ստեղծելուն: Ճիշտ է, ինչպես հաղորդեցին մի շարք թերթեր, դա չխանգարեց նրան Լ. Ռոխլինի հետ բանակցություններ վարել՝ Ադրբեջանի եւ Ռուսաստանի ռազմատեխնիկական համագործակցության շուրջ եւ, ընդսմին, ԱՄՆ-ի ռազմական հետախուզության «շեֆին»՝ Փ. Հյուզին հայտնել, «Ռուսաստանը մեր պատմական թշնամին է, բայց այսօր նրա ռազմատեխնիկական օգնությունը մեզ օդի նման պետք է»:

Դժվար թե գեներալներ Ռոդիոնովն ու Ռոխլինը գլխի են ընկնում, թե այդ ինչու, օգտվելով Հայաստանում ռուսաստանյան ռազմակայանների շուրջ արհեստականորեն զարկ տված վանդալիզմից, Ադրբեջանը կրակի մեջ յուղ է լցնում՝ «ձեռքի հետ» սկանդալի մեջ ներքաշելով Իրանին: «Սեգոդնյա» թերթը գրում է. «Սենսացիոն դարձավ Միլլի մեջլիսի նիստում Ադրբեջանի ազգային անվտանգության փոխնախարարի հաղորդումը, թե Ռուսաստանից Հայաստան զենքը ռուսաստանյան նավերով փոխադրվում է Կասպիականով էնզելի նավահանգիստ»: Ամենեւին զարմանալի չէ, որ դրանից մեկ օրաթաք առաջ ադրբեջանական հեռուստատեսությունը ցույց տվեց էնզելի նավահանգիստը, անվանելով այն «Հարավային Ադրբեջանի» (Հյուսիսային Իրան) դարպաս, որտեղ, իբր թե, խան միլիոն ադրբեջանցի է ապրում: Բայցեւայնպես, այս հանգամանքն ամենեւին չխանգարեց պաշտոնական Բաքվին թուրքերեն համարել ադրբեջաներենը, ճիշտ այնպես, ինչպես չխանգարեց փոխել իրենց սլավոնական այբուբենը լատինականով՝ «թուրքական ակցենտով»: Սակայն «սենսացիան» այլ տեղում էր: Ադրբեջանի ղեկավարությունը որոշեց Արեւմուտքի ուշադրությունը «հրավիրել» Հայաստանում ռուսաստանյան զենքի եւ ռազմակայանների հիմնախնդրի վրա՝ բաց իմանալով Իրանի հանդեմ ԱՄՆ-ի եւ Իսրայելի բացասական վերաբերմունքը: Սա արդեն ոչ թե յուղ լցնել է կրակի մեջ, այլ՝ բենզին:

Կարեւոր է, որ ավելի շատ աղմուկ բարձրանա: Անհրաժեշտ է վարագույր սարքել, որի հետեւում հնարավոր կլինի անշեղորեն շարունակել սպառազինվելը՝ կարծելով, որ Հայաստանն ու Ռուսաստանն սխիզված կլինեն արդարանալ, այլ ոչ թե՝ մերկացնել Ադրբեջանին:

Պահն իրոք որ բարենպաստ է ռազմական սադրանքների համար: Մոսկվան զբաղված է իր բարդ հիմնահարցերով, եւ ոչ ոք չի նկատի, որ ՕՊԵԿ-ով երեկոյան ժամը վեցին ցույց են տալիս հաղորդում, աշխարհագրական այն քարտեզի ցուցադրմամբ, որի վրա նշված են Ադրբեջանից Չեչնիա զենքի փոխադրման երթուղիները: Իսկ մի փոքր ուշ՝ նույն ծրագրով կարելի է լսել Ադրբեջանի նոտայի տեքստը՝ ռուսաստանյան զենքը Հայաստանին փոխանցելու մասին: Հաջորդ օրը որոշ թերթեր տպագրում են նոտան, իսկ մյուսները՝ «Թուրան» տեղեկատվական գործակալությանը Շամիլ Բասաեւի տված հարցազրույցի տեքստը: «Չեչենները չեն մոռանում ոչ լավությունը, ոչ էլ՝ վատությունը: Չեչնիայի եւ Ռուսաստանի պատերազմի ժամանակ Ադրբեջանը Չեչնիային անգնահատելի օգնություն է ցույց տվել, չի վարվել, ինչպես Ռուսաստանին հաճոյացող, Մոսկվային սիրաշահող որոշ ժողովուրդներ ու երկրներ: Ադրբեջանը կարող է ակնկալել պատասխան օգնություն...»:

Դժվար չէ երեւակայել՝ որքա՞ն թուրքական զենք է մնում բուն Ադրբեջանում, եթե իբրեւ «անգնահատելի օգնություն նրա միջով «տարանցվում է» մահաբեր բեռը՝ «Ռուսաստանին չհաճոյանալու» համար: Թուրքիայի ճեռքին բավականաչափ ռուսաստանյան, ասել է՝ խորհրդային զենք կա: 1994 թ.-ին Անկարայում Ռուսաստանի առաջին փոխվարչապետ Օլեգ Սոսկովեցը գրչի մեկ հարվածով կես միլիարդ դոլարի զենք փոխանցեց Թուրքիային: Ահա այսպիսի, մեղմ ասած, տարօրինակ ձեւով, նա մարեց Ռուսաստանի պարտքը Թուրքիային՝ շատ լավ իմանալով, որ այսպես ասած սովետական բոլոր տրամաչափերի զենքերը կգործադրվեն միմիայն դարաբաղյան ռազմաճակատում: Քանզի ցանկացած այլ հակառակորդի դեմ Թուրքիան, բնականաբար, կպատերազմի «նատոական» զենքով:

«ՆԳ»-ում հրապարակված վերոհիշյալ նյութի մեջ խոսվում էր ԽՍՀՄ 4-րդ բանակի՝ Ստեփանակերտում տեղակայված 366-րդ մոտոհրաձգային գնդի մասին: ԽՍՀՄ-ի կազմալուծումից դեռեւս շատ առաջ այդ գնդից բան չէր՝ մնացել: «Դժոխք եւ դրախտ» գրքում ես բերել եմ տվյալներ, թե ինչպես Ադրբեջանի ղեկավարությունը բառացիորեն ավերեց գունդը՝ Ադդամ փոխադրելով ամբողջ սպառազինությունն ու զինամթերքը: Եվ այսօր, երբ այնտեղ շատախոսում են Հայաստանում ռուսաստանյան ռազմակայանի եւ իբրեւ անհատույց փոխանցված մի քանի տասնյակ տանկի մասին, ցանկություն է առաջանում հիշեցնելու՝ իսկ Ադրբեջանի՞ն, այդ դեպքում, ինչ է մնացել: Ով ով, բայց այն ժամանակ Անդրկովկասի ռազմական օկրուգի հրամանատար, գեներալ Ռոդիոնովը հո շատ լավ գիտի, որ հարավային ուղղության ռեզերվը պահեստավորվում էր Ադրբեջանական ԽՍՀ-ում: Նա գիտի նաեւ այդ ռեզերվի աստղաբաշխական թվի մասին, 10 հազար վագոն: Եթե Հայաստանում տեղակայված էր ընդամենը երեք մոտոհրաձգային դիվիզիա, ապա Ադրբեջանում՝ չորս մոտոհրաձգային, մեկ օդադեսանային դիվիզիաներ, մեկ հատուկ նշանակության բրիգադ, երեք հակաօդային պաշտպանության բրիգադ, Կասպիական տորմիղն իր հեռահար հրետանիով:

Անիրազեկ մարդկանց համար հարկ է վերծանել այդ տվյալները: Տանկեր. Հայաստանին բաժին ընկավ 164, Ադրբեջանին՝ 330, զրահամեքենաներ՝ համապատասխանաբար. 44–350, հետեւակի մարտական մեքենաներ՝ 225–420, հրետանային համակարգեր՝ 179–420, ականանետներ՝ 82–250, հրաձգային զենք (ավտոմատներ, գնդացիրներ՝ 36000–150000, ռազմական ինքնաթիռներ՝ 6–53, ռազմական ուղղաթիռներ՝ 19–37, C-200, C-125, C-75 համալիրներ՝ 9–227:

Դժվար չէ պատկերացնել, թե ինչ վերապրեց Դարաբաղն այդ չորսամյա պատերազմի ընթացքում, եթե օրեր էին լինում, երբ Շուշիից միայն Ստեփանակերտի վրա 400 անգամ կրակում էին «Գրադ» կայանքներից: Յուրաքանչյուր համազարկում 40 հրթիռ է: Յուրաքանչյուր հրթիռը՝ 3 մետր երկարությամբ, 100 կգ քաշով: Հրադադարից առաջ ԼՂՀ տարածքում չէր մնացել եւ ոչ մի օբյեկտ: Պետք է խոստովանել, որ Լեռնային Դարաբաղի Հանրապետության ինքնապաշտպանության մարտիկներին հաջողվել էր խփել քսանից ավելի մարտական ինքնաթիռ եւ ուղղաթիռ, ռազմավար վերցնել երկու հարյուրից ավելի տանկ եւ մարտական մեքենա եւ անթիվ զինամթերք, առանց որի, բերեւս, դժվար կլիներ սկսել բանակցությունները:

Քաղաքական գործիչներն ու ռազմավարները պնդում են, թե մեր մոլորակը կես դարից ավելի է, ինչ ապրում է խաղաղության մեջ, քանի որ պատերազմից անմիջապես հետո օվկիանոսի երկու կողմերում հաստատվեց ուժերի մի տեսակ հավասարակշռություն՝ առաջին հերթին նկատի ունենալով միջուկային զենքը: Ի դեպ՝ մենք տեսնում ենք, թե ինչպես սկսեցին կուսակցել պատերազմի «ամպրոպազդ» ամպերը: Ուժերի անհավասարակշռությունն ու «պարիտետի օրենքի» (տերմինն իմը չէ) խախտումը հանգեցրին վերջնագրերի խոսելակերպին, բարձր տոնով խոսելուն, նախկին պայմանավորվածությունների չկատարմանը եւ բացահայտ սադրանքներին: Պարիտետի օրենքը, կարծում ենք, մեկն է՝ թե՝ «մոլորակային», եւ թե՝ տարածաշրջանային մասշտաբով: Եվ «Դարաբաղում եւ նրա շուրջը» (տերմինը Գորբաչովինն է) խաղաղություն այսօր պահպանվում է եթե ոչ ուժերի պարիտետի շնորհիվ, ապա Ադրբեջանի այն գիտակցության պատճառով, որ Արցախի պաշտպանությունն ու մարտունակությունը բարձր է: Կյանքը ցույց է տալիս, որ չի կարելի ստի ու կեղծիքի վրա կառուցել խաղաղությունը: Ամուր խաղաղություն կարելի է կառուցել միայն անհերքելի փաստերի վրա:

Սակայն, սկսած 1994-ի ամռանից Ադրբեջանը համառորեն զարգացնում է իր մարտական ներուժը, ընդսմին, աղմուկ բարձրացնելով՝ «բոնե՛ գողին» սկզբունքով: Քանի՞ անգամ ոչ միայն հայկական կողմը, այլեւ անկախ դիտորդները հայտնել են աշխարհին, որ Ադրբեջանը «նատոական» Թուրքիայի հաշվին զինվում է սպառազինությամբ եւ հանդերձանքով: Երանի թե՝ միայն «նատոականով»:

Այսօր, հավանորեն, գերեզմաններում շուռումուռ են գալիս Զատորժյան Սեյի հերոսները՝ իմանալով, որ Ուկրաինան այժմ օգնում է միլիտա-

Գողը գոռում է. «Բռնե՛ք գողին»

Ադրբեջանը շարունակ մեղադրում է Հայաստանին, մինչդեռ ինքն անհամեմատ շատ է օգտվել Ռուսական սպառազինությունից

ՀՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ



Ստեփանակերտ. Հերթական օմբակոծությունից հետո

1992 թ. փետրվարին, այսինքն ընդհուպ Խոջալուի կրակակետի վերացման պահը, գյուղում բնակվել է 10 հազար մարդ:

Դրանից երեք տարի առաջ ԽՍՀՄ-ում անցկացվել էր ազգաբնակչության համամիութենական մարդահամար, որի համաձայն Խոջալուում ապրել է մոտ 1500 բնակիչ: Երկու ամիս անց տեղի ունեցան ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների ընտրությունները: Ես վերջին խորհրդային պառլամենտի կազմի մեջ ընտրվեցի Ասկերանի թիվ 729 ազգային-տարածքային օկրուգից, որի մեջ էր մտնում նաեւ Խոջալուն: Բուն ընտրություններից մի քիչ առաջ Ասկերան էրքենտոնում նախընտրական ժողով անցկացվեց, որին մասնակցեցին բոլոր տեղամասերի ներկայացուցիչները, այդ թվում նաեւ Խոջալուից: Ինձ, իբրեւ պատգամավորության թեկնածուի, հասցեագրած իր հարցից առաջ խոջալեցիներից մեկը տեղեկացրեց, թե դիմում է Խոջալուի շուրջ հազար ընտրողների անունից: Սա նշանակում է, որ այդ գյուղում, իրոք, բնակվում էր մոտ 1500 մարդ:

Եվ հանկարծ, 1992-ի փետրվարին՝ տասը հազար բնակիչ: Հանուն արդարության հարկ է ասել, որ 1990–91 թթ. Ադրբեջանի այն ժամանակվա նախագահ Մութալիբովը կոմունիզմի հիրավի մեծ շինարարություն ծավալեց հենց Խոջալու գյուղի շուրջը: Այդ նենգավոր «խաղաղականության» մեջ դրված էր առանձնահատուկ ռազմավարական իմաստ: Գյուղը գտնվում է այն միակ ավտոմայրուղու երկու կողմում, որը կապում էր Ստեփանակերտը արտաքին աշխարհի հետ: Այն էլ՝ մարզում միակ օդակայանի կողքին: Եվ շատ կարգով, «ծածկադմփոցի» ներքո, այսինքն Գորբաչովի հայտարարած արտակարգ դրության եւ խստագույն պարետային ժամի պայմաններում, գիշեր ու ցերեկ բազմահարկ շենքեր էին կառուցվում թռիչքագոտու հենց եզրին: Կառուցվում էին ոչ միայն բնակելի տներ, այլ նաեւ աշխատատեղեր. ֆաբրիկաներ, արհեստանոցներ, հանրապետության խոշոր արտադրական միավորումների մասնաճյուղեր: Սակայն, բարեբախտաբար, չհաստատեցին բնակեցնել Խոջալուն: Վտարելով ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի ստորաբաժանումները՝ 1990-ի աշնանից Խոջալուի եւ օդակայանի լիիրավ տեր դարձավ ադրբեջանական ՕՄՕՆ-ը, որը վայրագություններ անելով, միաժամանակ դարձավ երբեմնի այն փոքրիկ հայկական գյուղակի ռազմականացման հիմքը, որից սովետական իշխանության տարիներին դուրս էին մղել բոլոր հայերին, այդ թվում նաեւ իմ բազմաթիվ ազգականներին: Այսպիսով՝ համաստարած կրակակետի վերածված Խոջալուում տեղակայվեցին մինչեւ ատամները զինված հրոսակային կազմավորումները:

Օրերային տվյալների համաձայն, որ ես ստանում էի որպես պատգամավոր, այդ ժամանակ Խոջալուում կային ընդամենը չորս հարյուր խաղաղ բնակիչներ: Իսկ «ՆԳ»-ի հրապարակումից տեղեկանում ենք, որ գյուղում սպանվել էր 500 մարդ, հազարավոր մարդիկ վիրավորվել էին, հազարավորները՝ անհետ կորել: Եվ որպեսզի «վիճակագրությունը» ճշմարտանման թվա, ավելացնում են՝ «այդ թվում՝ 106 կին, 33 փոքրահասակ երեխա, 76 անչափահաս երեխա»: Հատկանշական է, որ հենց նույն «Նեզավիսիմայա գազետան» 1992 թ. ապրիլի 2-ին, այսինքն Խոջալուի կրակակետը վերացնելուց մեկ ամիս անց, Մութալիբովի խոսքերին հիմնվելով, գրեց. «Հայերը թողել են այն միջանցքը, որով մարդիկ կարող էին դուրս գալ»: Այդ դեպքում նրանց (հայերին–Զ. Բ.) ինչի՞ն է պետք կրակել (ադրբեջանցիների–Զ. Բ.) վրա: Հատկանշական են Ադրբեջանի նախագահի նաեւ այլ խոսքերը՝ նույն «ՆԳ»-ում. «Ի դեպ, այդ ընթացքում ես խոսել եմ ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահի՝ Մկրտչյանի հետ. «Դուք գենքին ել փռել հազարավոր մարդկանց, թույլ տվեք մեզ դուրս բերել դիակները»: Բայց նա պատասխանեց, որ ոչ մի դիակ չպետք է լինի: Նրանց (հայկական կողմի–Զ. Բ.) մոտ են մեր մարդիկ, որոնց կերակրում են, թեպետ պարենն իրենց էլ չի հերիքում, եւ պատրաստ են բաց թողնելու իրենց պատանդների դիմաց...»

Ի հաստատումն Մութալիբովի ասածի, կարելի է ցույց տալ Խոջալուի օրերին լենինգրադցի լրագրող Սվետլանա Կուլչիցկայայի նկարահանած հեռուստակադրերը: Մի խումբ խոջալեցիներ (հիմնականում կանայք եւ երեխաներ) Սվետլանային պատմում են, թե ինչպիսի ուխտադրժությամբ են իրենց լքել «օմոնականները», եւ ինչպես են իրենց վերաբերվել հայերը՝ կիսելով իրենց հետ վերջին կտոր հացը: Դժվար չէ կռահել, ինչո՞ւ հենց հինգ տարի անց լրագրողը «ՆԳ»-ում գրում է, թե զինված հայերը դիմահար գնդակահարում էին անզեն ադրբեջանցիներին, թե հայկական կազմավորումները սկսել են Խոջալուի զանգվածային գրոհը՝ «Ստեփանակերտում տեղակայված նախկին ԽՍՀՄ 4-րդ բանակի 366-րդ մոտոհրաձգային գնդի կրակային եւ տեխնիկական աջակցության ներքո»:

Նման կեղծարարությունը հենց այսօր է անհրաժեշտ, քանի որ միանման ինֆորմացիաների մի ամբողջ հորձանք է տեղում այն մասին, թե իբր Ադրբեջանը, ինչպես նշվում է «ՆԳ»-ի մեկ այլ հրապարակման մեջ (1997 թ. մարտի 5-ի), «անհանգստացած է Ռուսաստանի եւ Հայաստանի ռազմական դաշինից, մասնավորապես, հայկական տարածքում ռուսաստանյան ռազմական հենակայանների առկայությունից»: Սույն հրապարակումից մեկ օր անց Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւը «Օբշայա գազետային» տված հարցազրույցում նշում է, թե ինքը բացասաբար է վերաբերվում Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ ռազմական դաշինք ստեղծելուն: Ճիշտ է, ինչպես հաղորդեցին մի շարք թերթեր, դա չխանգարեց նրան Լ. Ռոխլինի հետ բանակցություններ վարել՝ Ադրբեջանի եւ Ռուսաստանի ռազմատեխնիկական համագործակցության շուրջ եւ, ընդսմին, ԱՄՆ-ի ռազմական հետախուզության «շեֆին»՝ Փ. Հյուզին հայտնել, «Ռուսաստանը մեր պատմական թշնամին է, բայց այսօր նրա ռազմատեխնիկական օգնությունը մեզ օդի նման պետք է»:

Դժվար թե գեներալներ Ռոդիոնովն ու Ռոխլինը գլխի են ընկնում, թե այդ ինչու, օգտվելով Հայաստանում ռուսաստանյան ռազմակայանների շուրջ արհեստականորեն զարկ տված վանդալիզմից, Ադրբեջանը կրակի մեջ յուղ է լցնում՝ «ձեռքի հետ» սկանդալի մեջ ներքաշելով Իրանին: «Սեգոդնյա» թերթը գրում է. «Սենսացիոն դարձավ Միլլի մեջլիսի նիստում Ադրբեջանի ազգային անվտանգության փոխնախարարի հաղորդումը, թե Ռուսաստանից Հայաստան զենքը ռուսաստանյան նավերով փոխադրվում է Կասպիականով էնզելի նավահանգիստ»: Ամենեւին զարմանալի չէ, որ դրանից մեկ օրաթաք առաջ ադրբեջանական հեռուստատեսությունը ցույց տվեց էնզելի նավահանգիստը, անվանելով այն «Հարավային Ադրբեջանի» (Հյուսիսային Իրան) դարպաս, որտեղ, իբր թե, խան միլիոն ադրբեջանցի է ապրում: Բայցեւայնպես, այս հանգամանքն ամենեւին չխանգարեց պաշտոնական Բաքվին թուրքերեն համարել ադրբեջաներենը, ճիշտ այնպես, ինչպես չխանգարեց փոխել իրենց սլավոնական այբուբենը լատինականով՝ «թուրքական ակցենտով»: Սակայն «սենսացիան» այլ տեղում էր: Ադրբեջանի ղեկավարությունը որոշեց Արեւմուտքի ուշադրությունը «հրավիրել» Հայաստանում ռուսաստանյան զենքի եւ ռազմակայանների հիմնախնդրի վրա՝ բաց իմանալով Իրանի հանդեմ ԱՄՆ-ի եւ Իսրայելի բացասական վերաբերմունքը: Սա արդեն ոչ թե յուղ լցնել է կրակի մեջ, այլ՝ բենզին:

Կարեւոր է, որ ավելի շատ աղմուկ բարձրանա: Անհրաժեշտ է վարագույր սարքել, որի հետեւում հնարավոր կլինի անշեղորեն շարունակել սպառազինվելը՝ կարծելով, որ Հայաստանն ու Ռուսաստանն սխիզված կլինեն արդարանալ, այլ ոչ թե՝ մերկացնել Ադրբեջանին:

Պահն իրոք որ բարենպաստ է ռազմական սադրանքների համար: Մոսկվան զբաղված է իր բարդ հիմնահարցերով, եւ ոչ ոք չի նկատի, որ ՕՊԵԿ-ով երեկոյան ժամը վեցին ցույց են տալիս հաղորդում, աշխարհագրական այն քարտեզի ցուցադրմամբ, որի վրա նշված են Ադրբեջանից Չեչնիա զենքի փոխադրման երթուղիները: Իսկ մի փոքր ուշ՝ նույն ծրագրով կարելի է լսել Ադրբեջանի նոտայի տեքստը՝ ռուսաստանյան զենքը Հայաստանին փոխանցելու մասին: Հաջորդ օրը որոշ թերթեր տպագրում են նոտան, իսկ մյուսները՝ «Թուրան» տեղեկատվական գործակալությանը Շամիլ Բասաեւի տված հարցազրույցի տեքստը: «Չեչենները չեն մոռանում ոչ լավությունը, ոչ էլ՝ վատությունը: Չեչնիայի եւ Ռուսաստանի պատերազմի ժամանակ Ադրբեջանը Չեչնիային անգնահատելի օգնություն է ցույց տվել, չի վարվել, ինչպես Ռուսաստանին հաճոյացող, Մոսկվային սիրաշահող որոշ ժողովուրդներ ու երկրներ: Ադրբեջանը կարող է ակնկալել պատասխան օգնություն...»:

Դժվար չէ երեւակայել՝ որքա՞ն թուրքական զենք է մնում բուն Ադրբեջանում, եթե իբրեւ «անգնահատելի օգնություն նրա միջով «տարանցվում է» մահաբեր բեռը՝ «Ռուսաստանին չհաճոյանալու» համար: Թուրքիայի ճեռքին բավականաչափ ռուսաստանյան, ասել է՝ խորհրդային զենք կա: 1994 թ.-ին Անկարայում Ռուսաստանի առաջին փոխվարչապետ Օլեգ Սոսկովեցը գրչի մեկ հարվածով կես միլիարդ դոլարի զենք փոխանցեց Թուրքիային: Ահա այսպիսի, մեղմ ասած, տարօրինակ ձեւով, նա մարեց Ռուսաստանի պարտքը Թուրքիային՝ շատ լավ իմանալով, որ այսպես ասած սովետական բոլոր տրամաչափերի զենքերը կգործադրվեն միմիայն դարաբաղյան ռազմաճակատում: Քանզի ցանկացած այլ հակառակորդի դեմ Թուրքիան, բնականաբար, կպատերազմի «նատոական» զենքով:

«ՆԳ»-ում հրապարակված վերոհիշյալ նյութի մեջ խոսվում էր ԽՍՀՄ 4-րդ բանակի՝ Ստեփանակերտում տեղակայված 366-րդ մոտոհրաձգային գնդի մասին: ԽՍՀՄ-ի կազմալուծումից դեռեւս շատ առաջ այդ գնդից բան չէր՝ մնացել: «Դժոխք եւ դրախտ» գրքում ես բերել եմ տվյալներ, թե ինչպես Ադրբեջանի ղեկավարությունը բառացիորեն ավերեց գունդը՝ Ադդամ փոխադրելով ամբողջ սպառազինությունն ու զինամթերքը: Եվ այսօր, երբ այնտեղ շատախոսում են Հայաստանում ռուսաստանյան ռազմակայանի եւ իբրեւ անհատույց փոխանցված մի քանի տասնյակ տանկի մասին, ցանկություն է առաջանում հիշեցնելու՝ իսկ Ադրբեջանի՞ն, այդ դեպքում, ինչ է մնացել: Ով ով, բայց այն ժամանակ Անդրկովկասի ռազմական օկրուգի հրամանատար, գեներալ Ռոդիոնովը հո շատ լավ գիտի, որ հարավային ուղղության ռեզերվը պահեստավորվում էր Ադրբեջանական ԽՍՀ-ում: Նա գիտի նաեւ այդ ռեզերվի աստղաբաշխական թվի մասին, 10 հազար վագոն: Եթե Հայաստանում տեղակայված էր ընդամենը երեք մոտոհրաձգային դիվիզիա, ապա Ադրբեջանում՝ չորս մոտոհրաձգային, մեկ օդադեսանային դիվիզիաներ, մեկ հատուկ նշանակության բրիգադ, երեք հակաօդային պաշտպանության բրիգադ, Կասպիական տորմիղն իր հեռահար հրետանիով:

Անիրազեկ մարդկանց համար հարկ է վերծանել այդ տվյալները: Տանկեր. Հայաստանին բաժին ընկավ 164, Ադրբեջանին՝ 330, զրահամեքենաներ՝ համապատասխանաբար. 44–350, հետեւակի մարտական մեքենաներ՝ 225–420, հրետանային համակարգեր՝ 179–420, ականանետներ՝ 82–250, հրաձգային զենք (ավտոմատներ, գնդացիրներ՝ 36000–150000, ռազմական ինքնաթիռներ՝ 6–53, ռազմական ուղղաթիռներ՝ 19–37, C-200, C-125, C-75 համալիրներ՝ 9–227:

Դժվար չէ պատկերացնել, թե ինչ վերապրեց Դարաբաղն այդ չորսամյա պատերազմի ընթացքում, եթե օրեր էին լինում, երբ Շուշիից միայն Ստեփանակերտի վրա 400 անգամ կրակում էին «Գրադ» կայանքներից: Յուրաքանչյուր համազարկում 40 հրթիռ է: Յուրաքանչյուր հրթիռը՝ 3 մետր երկարությամբ, 100 կգ քաշով: Հրադադարից առաջ ԼՂՀ տարածքում չէր մնացել եւ ոչ մի օբյեկտ: Պետք է խոստովանել, որ Լեռնային Դարաբաղի Հանրապետության ինքնապաշտպանության մարտիկներին հաջողվել էր խփել քսանից ավելի մարտական ինքնաթիռ եւ ուղղաթիռ, ռազմավար վերցնել երկու հարյուրից ավելի տանկ եւ մարտական մեքենա եւ անթիվ զինամթերք, առանց որի, բերեւս, դժվար կլիներ սկսել բանակցությունները:

Քաղաքական գործիչներն ու ռազմավարները պնդում են, թե մեր մոլորակը կես դարից ավելի է, ինչ ապրում է խաղաղության մեջ, քանի որ պատերազմից անմիջապես հետո օվկիանոսի երկու կողմերում հաստատվեց ուժերի մի տեսակ հավասարակշռություն՝ առաջին հերթին նկատի ունենալով միջուկային զենքը: Ի դեպ՝ մենք տեսնում ենք, թե ինչպես սկսեցին կուսակցել պատերազմի «ամպրոպազդ» ամպերը: Ուժերի անհավասարակշռությունն ու «պարիտետի օրենքի» (տերմինն իմը չէ) խախտումը հանգեցրին վերջնագրերի խոսելակերպին, բարձր տոնով խոսելուն, նախկին պայմանավորվածությունների չկատարմանը եւ բացահայտ սադրանքներին: Պարիտետի օրենքը, կարծում ենք, մեկն է՝ թե՝ «մոլորակային», եւ թե՝ տարածաշրջանային մասշտաբով: Եվ «Դարաբաղում եւ նրա շուրջը» (տերմինը Գորբաչովինն է) խաղաղություն այսօր պահպանվում է եթե ոչ ուժերի պարիտետի շնորհիվ, ապա Ադրբեջանի այն գիտակցության պատճառով, որ Արցախի պաշտպանությունն ու մարտունակությունը բարձր է: Կյանքը ցույց է տալիս, որ չի կարելի ստի ու կեղծիքի վրա կառուցել խաղաղությունը: Ամուր խաղաղություն կարելի է կառուցել միայն անհերքելի փաստերի վրա:

Սակայն, սկսած 1994-ի ամռանից Ադրբեջանը համառորեն զարգացնում է իր մարտական ներուժը, ընդսմին, աղմուկ բարձրացնելով՝ «բոնե՛ գողին» սկզբունքով: Քանի՞ անգամ ոչ միայն հայկական կողմը, այլեւ անկախ դիտորդները հայտնել են աշխարհին, որ Ադրբեջանը «նատոական» Թուրքիայի հաշվին զինվում է սպառազինությամբ եւ հանդերձանքով: Երանի թե՝ միայն «նատոականով»:

Այսօր, հավանորեն, գերեզմաններում շուռումուռ են գալիս Զատորժյան Սեյի հերոսները՝ իմանալով, որ Ուկրաինան այժմ օգնում է միլիտա-

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

հակադարձություն

rիսական Թուրքիային: Անկարայից ստանալով Բոսֆորով ու Դարդանելով արտոնյալ անցման իրավունք իր նավերի համար՝ միայն վերջին երկու տարում Ուկրաինան Թուրքիայի դաշնակից Ադրբեջանին է փոխանցել 150 մարտական տանկ, 150 հետեւակի մարտական մեքենա, 5 ինքնաթիռ (ՄԻԳ-25), 4 «Սմերչ» համակարգ, 4 «Ուրագան» համակարգ, 15 «Գվոզդիկա» 122-մմ ինքնագնաց հաուբից, 20 «Ակացիա» 152-մմ ինքնագնաց հաուբից:

Այս ամենի մասին, անշուշտ, գիտեն Իգոր Ռոդիոնովը, Լեւ Ռոխլինը եւ Ամանգելդի Տուլեեւը: Եվ, այսուհանդերձ, աղմուկ-աղաղակ են բարձրացնում Ռուսաստանի կողմից «անհասույց» փոխանցված մի քանի տասնյակ տանկի ու ՀՄՄ-ի շուրջ՝ գերազանց իմանալով, որ դա արվել է ոչ թե Հայաստանի սիրուն աչքերի եւ իր տարածքում Ռուսաստանի ներկայության հանդեպ բարեկամական վերաբերմունքի համար: Ռուսաստանը չի մտածում Հայաստանի Հանրապետությունում ռուսաստանյան ռազմակայանի մնալու վարձավճարը, իսկ բուն ռազմակայանի նյութական մասը նորոգվել է համատեղ քանքերով եւ լավ վիճակում է: Չնայած շարունակվող շրջափակմանը եւ ծանր ֆինանսական դրությանը՝ Հայաստանն, այնուամենայնիվ, ստանձնել է սահմանային զորքերի պահելու ծախսի 30 տոկոսը եւ իր տարածքում ռուսաստանյան զինուժերի մնալու ծախսի 25 տոկոսը: Այդ տվյալները կարելի է ստանալ ոչ միայն պաշտպանության եւ ազգային անվտանգության նախարարություններում, այլ նաեւ՝ բուն ռուսաստանյան զորքերում:

Արդեն չորս ամիս է, ինչ ապատեղեկացնելով հասարակայնությանը, զանգվածային լրատվության միջոցները «բազմացնում են» հաճախակի Բաֆու այցելող գեներալների խոսքերն այն մասին, թե «Հայաստանի Հանրապետությունում ռուսաստանյան ռազմակայանի մնալը Ռուսաստանին պատանդ է դարձնում Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության պայմաններում»: Հենց այս մասին է խոսվում ՌԴ Պետդումայի որոշման նախագծի մեջ, որը պատրաստել է Պաշտպանության կոմիտեն, ասել է, ինքը՝ գեներալ Ռոխլինը: Այն օրերին, երբ որոշման նախագիծը լայնորեն հրապարակվեց մամուլում, ադրբեջանցի պաշտոնյաները բացահայտորեն արտահայտվեցին, որ «Ադրբեջանը Արեւելյան եվրոպայի հարավ-արեւելյան վերջին սահմանագիծն է»: Ճիշտ այնպես, ինչպես հնչել է Տրումենի հայտնի բանաձեւում. «Թուրքիան ԱՄՆ-ի ծայրագույն արեւելյան սահմանն է»: Ռուսաստանի հեռուստաձրագրերը ուղիղ եթերով հաղորդեցին Ադրբեջանի նախագահի հայտարարությունը. «Իրենց համագործակցության մեջ Ադրբեջանն ու ՆԱՏՕ-ն չեն սահմանափակվելու «Գործակցություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներով»: Դժվար չէ գլխի ընկնել, որ Վիշեգրադյան խմբի եւ Բալթյան երկրների նման Ադրբեջանը նպատակադրվել է դառնալ Հյուսիս-ատլանտյան դաշինքի անդամ:

Կարծում ենք, կարիք չկա մեջբերումներ անելու Իգոր Ռոդիոնովի ու Լեւ Ռոխլինի ելույթներից դեպի Արեւելք ՆԱՏՕ-ի ծավալվելու «համամոլորակային» վտանգի մասին: Դրանք հանրահայտ են:

Սակայն, զարմանալին այն է, որ «բազմափորձ» զինվորականները չեն նկատում, թե ինչպես ՆԱՏՕ-ն, ըստ էության, արդեն «ծավալվել է դեպի հարավ-արեւելք»: Մի կողմ դնենք այն փաստը, որ Պետդումայի Անվտանգության կոմիտեի նախագահն առաջարկում է դուրս բերել զորքերը Հայաստանի տարածքից, որը սահմանակցում է ՆԱՏՕ-ի ամենաակտիվ եւ ագրեսիվ անդամ-պետություններից մեկին: Չէ՞ որ գաղտնիք չէ, որ Ադրբեջանն ինքն արդեն այսօր սերտաձել է հյուսիսատլանտյան դաշինքին: Խոսքը Թուրքիայի եւ Ադրբեջանական Հանրապետության ռազմական ակտիվ համագործակցության մասին է: Ներկայումս մոտ հազար ազերի կադրային զինվորականներ ուսում են առնում «նատոական» ծրագրով, Թուրքիայի ռազմական ուսումնական հաստատություններում: Ադրբեջանի զինուժերի ստորաբաժանումները մարտական փորձ են ձեռք բերում Թուրքիայի հատուկ նշանակության զորամասերի կազմում՝ Արեւելյան Անատոլիայի տարածքում քուրդ ապստամբների դեմ գործադրվող անթիվ ձեռնարկումների ընթացքում: Մի՞թե Ռուսաստանի պաշտպանության նախարարին հայտնի չէ, որ այսօր գործնականորեն է ծավալվում սպառազինության եւ զինամթերքի ադրբեջանա-թուրքական համատեղ արտադրությունը:

Հայաստանի թթի տակ հասակ է առել ՆԱՏՕ-ի խոհանոցից սնվող չարագույժ արտադրությունը: Դրան հակադրվում են հայկական փոքր բանակն ու ռուսաստանյան ռազմակայանը, որը Լեւ Ռոխլինի կարծիքով «ընդունակ չէ կատարել առաջավոր տեղակայման զորքերի խնդիրներ՝ տվյալ տարածաշրջանում ռազմական գործողությունների դեպքում...»:

Հետաքրքիր է՝ այդ որտեղի՞ց կարող են սկսվել «տվյալ տարածաշրջանում ռազմական գործողությունները», եթե խոսքը միմիայն Թուրքիայի հետ սահմանի մասին է: Պատահական չէ՝ Կուբայից խորհրդային հրթիռները դուրս բերելու վերջնագրին ի պատասխան իմաստուն Նիկիտա Խրուշչովը առաջարկել էր դուրս բերել համապատասխան սպառազինությունը Թուրքիայից: Իսկ այսօր, Ռուսաստանի Պետդումայի Պաշտպանության կոմիտեի նախագահն առաջարկում է «ինքնության առնել Հայաստանի տարածքում ռազմակայանների մնալու նպատակահարմարությունը»: Փոխանակ ելույթ ունենար Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի դեմ նպատակաուղղված, «ժանիքներ ցույց տվող» Թուրքիայում տեղակայված ամերիկյան ռազմակայանների դեմ: Ես ուզադրություն դարձրի, որ Ադրբեջան այրությունը անմիջապես հետո շտապեցին միսիոներներ խեղդրվելով խոսում միսիոներներ խեղդրվելով խոսում Նիկիտա Խրուշչովը, ոչ միայն Թուրքիան, այլ նաեւ Ռուսաստանը՝ առանց երրորդ կողմին այն հանձնելու իրավունքի: Դա, իբր անհրաժեշտ էր «Նախիջեւանի անկախ զարգացման համար»: Սակայն, այդ օրվանից Ռուսաստանի խնամակալության մասին որեւէ ձայն անգամ չի լսվել: Դեռ ավելին, ԽՍՀՄ-ի փլուզումից առաջ, ռուսաստանցի զինծառայողների ընտանիքների կյանքի պայմաններում լիովին ադրբեջանականացած հայկական ինքնավար հանրապետությունից ամբողջովին դուրս բերվեցին ռուսաստանյան զորքերը: Հայտնի է, որ դեռ խանական թվականներին Թուրքիան Իրանից հեռաստեսորեն գնեց Արաքսի ափի մի նեղլիկ հատված եւ այսպիսով ձեռք բերեց սեփական սահման Նախիջեւանի ԻԽՍՀ-ի հետ, որը ԽՍՀՄ Սահմանադրության մեջ բնորոշված էր որպես ինքնավարություն, քանի որ տեղաբնակները հայեր էին: Եվ այսօր նա արդեն էներգետիկական, տնտեսական, տրանսպորտային հաղորդակցական առումով ավելի է ենթարկվում Անկարային, քան՝ Բաքվին: Իսկ Մոսկվայի խնամակալության մասին արդեն բոլորը մոռացել են, այդ թվում՝ նաեւ Ռուսաստանում:

Եթե ռազմակայանների շուրջ ծայր առած «սկանդալի» (տերմինը վերցված է բազմաթիվ հրապարակումների վերնագրերից) թեժ պահին գեներալներ Ռոդիոնովն ու Ռոխլինը, գոնե հանուն պարհետի պահպանության, հանդիպեին պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի եւ Ազգային անվտանգության նախարար Սերժ Սարգսյանի հետ Հայաստանում՝ Նախիջեւանի սահմանի մոտ, ապա կիմանային նրանցից, որ Նախիջեւանում դիվիզիա է տեղակայված, որը զինպատրաստությունն անցել է ոչ թե ռուսաստանցի, այլ թուրք մասնագետների մոտ: Որ զինված է թուրքական եւ «նատոական» զենքով: Որ, ինչպես նշված է Դումայի որոշման մեջ, «տարածաշրջանում ռազմական գործողությունների» դեպքում, Նախիջեւանի ինքնավար հանրապետությունը կդառնա երկրորդ ճակատը, որտեղից մարտական գործողությունները Հայաստանի դեմ կմղի ոչ միայն Ադրբեջանը, այլ նաեւ Թուրքիան՝ որպես ե՛ւ խնամակալ, ե՛ւ դաշնակից: «Տարածաշրջանում իրադրության զարգացման այդօրինակ ծրագրումը,- ընդգծվում է Հայաստանի պաշտպանության նախարարության պաշտոնական փաստաթղթում,- կարող է դառնալ եւ անկասկած կդառնա դեպի հարավ-արեւելք ընդհուպ Կասպից ծով, ՆԱՏՕ-ի ծավալման միջանկյալ փուլ եւ յուրօրինակ գործիք»:

Կասկած չկա, որ զանգվածային լրատվության միջոցներում Հայաստանի եւ Ռուսաստանի դեմ ուղղված պաշտոնական հայտարարությունները, նոտաները, զանգվածային դրոհները արտաքինգործերի պետությունների ղեկավարներին եւ միջազգային կազմակերպություններին հասցեագրված դիմումներն Ադրբեջանին հարկավոր են, որպեսզի մի կողմից սվերվեն հայ-ռուսական հարաբերությունները, մյուս կողմից՝ կտրուկ ավելանա իր ռազմական գերազանցությունը Հայաստանի նկատմամբ: Իհարկե, գոյություն ունի մեկ գերխնդիր եւս. աշխարհի հասարակության աչքում արդարացնել սեփական գործողությունները՝ դարաբաղյան ծակատում ռազմական սադրանքներ վերսկսելու դեպքում:

Թուրքիան քաջ գիտի, որ լինելով Ռուսաստանի պատմական դաշնակիցը, Հայաստանը փորձաքար է դեպի Ադրբեջան, Միջին Ասիա, եւ առհասարակ՝ Թուրան տանող իր ճանապարհին: Գիտի նաեւ, որ ե՛ւ Հայաստանը, ե՛ւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը այսօրվա դրությամբ ունեն շարժունակ եւ մարտունակ բանակ, որը պատրաստ է պաշտպանելու ոչ միայն Հայաստանի եւ Ղարաբաղի տարածքային ամբողջականությունը, այլեւ՝ Ռուսաստանի աշխարհառազմավարական շահերը հարավային ուղղությամբ: Ես նշույլ անգամ չեմ կասկածում, որ անկախ այն բանից, թե ինչպիսի քաղաքական ուժեր եւ գաղափարախոսություն կներկայացնեն ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Հայաստանի վարչակազմն ու իշխանությունները, ժողովուրդների հանրագումարային իմաստնությունը կպարտադրի այսուհետեւ զարգացնել եւ խորացնել երկու երկրների ռազմավարական ու քաղաքական սերտաձումը: Փորձանքը պատուհասել է նրանց միայն այն ժամանակ, երբ կեղծվել է պատմությունը: Լինի հին պատմությունը, լինի՝ նորագույնը:

Անչափ սերտորեն են ներհյուսված Ռուսաստանի եւ Հայաստանի դարեդար մշակված փոխադարձ շահերը: Եվ ամեն անգամ նրանք կանգնել են փորձանքի առաջ, երբ Ռուսաստանի անունից հանդես են եկել պատմությունը չիմացող մարդիկ: Երբ իշխանության գլուխ են եկել նրանք, ովքեր փորձել են փոխել պատմությունը՝ նրանից սովորելու փոխարեն:

ՈՐԻՍԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ

«Կասպիցը չպետք է դառնա Պարսից ծոց»

Ռուսաստանյան ազդեցիկ «Սեգոդնյա» օրաթերթի մարտի 18-ի համարում «Կասպիցը չպետք է դառնա Պարսից ծոց» վերնագրով տպագրվել է հարցազրույց Ռուսաստանում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Մեհդի Սաֆարիի հետ:

Ներկայացնում ենք հատվածներ այդ հարցազրույցից:

Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուի Մոսկվա կատարած այցի ժամանակ ռուս-իրանական հարաբերությունները դարձան ենթարկման առարկա, քանի որ Նաթանյահուի կողմից ենթարկվել էին ենթադատության: Ռուս-ամերիկյան երկխոսության մեջ իրանական թեման ամենասուրերից է: Հավանական է, որ Հելսինկիում, Ելցին-Քլինթոն գագաթաժողովի ժամանակ, Մոսկվային չի հաջողվի խուսափել այդ թեմայի նոր ենթարկումից: Այդ կապակցությամբ դիմեցինք Մոսկվայում Իրանի դեսպան պարոն Մեհդի Սաֆարիին՝ խնդրելով մեկնաբանել ինչպես երկկողմանի հարաբերությունների, այնպես էլ տարածաշրջանային համագործակցության առավել այժմեական խնդիրները:

– Մի՞թե, բացի ամեն ինչից, այլ կարգի մրցակցություն չկա այս կամ ուրիշ տարածաշրջաններում, այս կամ այլ խնդիրներում Ռուսաստանի եւ Իրանի, Ռուսաստանի՝ եւ Թուրքիայի, Իրանի եւ Թուրքիայի միջեւ:

– Ես կավելացնեի այստեղ նաեւ Իրանը: Չէ՞ որ Ռուսաստան-Իրան-Իրան-Թուրքիա եռակուսում կազմավորվում են նոր, ես կասեի հատուկ հարաբերություններ: Մենք չենք մրցակցում, այլ փնտրում ենք մերձեցման եզրեր կարեւորագույն միջազգային հարցերում ամենայն խստությամբ պահպանելով միմյանց ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը:

Բերեմ բարձր օրինակ ռուսների համար: Չեչնիան: Չեմ թաքցնում, որոշ երկրներ նորից ասունն առայժմ չեմ տալ ուժեղ ճնշում էին գործադրում Իրանի վրա նպատակ ունենալով այս կամ այն չափով մեզ այդ հակամարտության մեջ ներքաշել: Ասում էին՝ իբր թե մենք աշխարհում հանդես ենք գալիս որպես «ուղեցույց» իսլամական հարցերում, եւ ենթադրում էին, որ հրաժարվել ենք երկիրը ասպողիկ միջանցք դարձնել նրանց համար, ովքեր իսլամի դրոշը փորձում էին ծառայեցնել իրենց նպատակներին: Այդպիսով Իրանին հասցվեց ուժեղագույն հարված: Բայց մենք դիմացանք: Չեչնիայի հարցում Թեհրանը հանդես է գալիս քաղաքական կարգավորման օգտին: Ավելացնեմ՝ եթե անհրաժեշտ լինի մեր օգնությունը Ռուսաստանին չեչենական կոնֆլիկտի վերջնական կարգավորման մեջ, եւ լինի այդպիսի խնդրանք Մոսկվայի կողմից, մենք միշտ կարձագանքենք, քանզի կողմնակից ենք պետությունների տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքին:

– Անդրկովկասյան խնդիրները ազդո՞ւմ են երկու երկրների հարաբերությունների վրա: Վերջերս, օրինակ, Ադրբեջանը հայտարարեց, թե 1994-1996 թթ. Մոսկվան էնզելի նավահանգստի վրայով գաղտնի զենք է մատակարարել Հայաստանին:

– Ադրբեջանի հայտարարությունը մեզ շատ զարմացրեց: Երեւանի մեր դեսպանատունը հանդես եկավ հստակ հերքումով: Մենք ձգտում ենք եւ Ադրբեջանի, եւ Հայաստանի հետ պահպանել լավ հարաբերություններ:

Ադրբեջանի համար այն ծանր պահին, երբ Իրան հորդեց փախստականների մեծ հոսք, մենք Ադրբեջանի բեռը թեթեւացնելու համար արեցինք առավելագույնը: Մեր օգնությունը հարեւան երկրին միայն դրանով չի վերջանում: Այլ հարց է, որ Բաքուն խանդով է վերաբերվում Հայաստանի եւ մեր փոխհարաբերություններին ենթադրելով, թե մենք մահմեդականներս, պետք է կրճատենք մեր կապերը հարեւան քրիստոնյա պետության հետ: Դա մեծագույն սխալ է: Իրանում մեծ թվով հայեր են ապրում: Նրանք ունեն իրենց ներկայացուցիչները մեր խորհրդարանում:

Չեմ թաքցնի, Ադրբեջանի հետ հարաբերություններում մենք ունենք տարաձայնություններ, գլխավորապես Կասպիցի կարգավիճակի հարցում:

Մենք զգնում ենք, որ այդ շրջանի բնական հարստությունները առաջին հերթին պատկանում են առափնյա երկրներին: Արեւմուտքի ձգտումը ներքաշանցելով Կասպյան շրջան, մոտենալ Իրանի սահմաններին, մեզ տագնապեցնում է: Սա թե ինչու ենք ձգտում արագորեն որոշել Կասպիցի իրավական կարգավիճակը, այլապես ապագա սերունդները մեզ չեն ների: Այդ հանգամանքը, սակայն, պատասխանատվությունից չի ազատում նրանց, ովքեր այստեղ են հրավիրում «երրորդ» ուժին: Եթե այդպիսի միտումը ընդունի հաստատուն բնույթ, ապա Կասպիցը շուտով կդառնա Պարսից ծոց:

«ԵՐԵՎԱՆ» ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳԵՆՏՐՈՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Ժամանակներ եկան ու անցան, երբ ուսուցչի դերն ու հեղինակությունը հասարակության մեջ առաջնակարգ էր: Դա պայմանավորված էր ոչ միայն նյութական, այլեւ բարոյական, հոգեբանական, հասարակական-քաղաքական մի ամբողջ շարք գործոնների ներդաշնակ համադրումով: Դասանների բարյացակամությունը: Դա էլ արդեն բխում է մեր կյանքի այսօրվա ընթացքից ու ուսուցչի համար շատ անմոռաս մի շարք հանգամանքներից:

Ուսուցիչների համար աշխատանքը արդեն ոչ միայն ստեղծագործական բնույթն է կորցրել, բավականություն բնավ չի պատճառում, այլեւ դարձել է պարտադրված եւ անհետաքրքիր գործ:

Եվ այդ գործը նա կատարում է գրեթե ձրի, անվճար, լոկ հասարակական կարգով, քանի որ պետության վճարած 10 դոլարը ոչինչ չի փոխում նրա կյանքում:

Շատերը դպրոցի աշխատանքին զուգընթաց աշխատում են այլ տեղերում, եռանդուն կերպով զբաղվում են առեւտրական գործունեությամբ: Ի՞նչ արած, ուրիշ ճար չունեն, իսկ ապրել պետք է: Վերջին տարիներին դպրոցներում լայն տարածում են գտել մասնավոր պարապմունքները: Ուսուցիչը, որն իր գիտելիքներով շատ հաճախ չի զիջում բուհերի դասախոսներին, պարապում է բավական էժան գներով ամսական 10-15 դոլար, երբեմն նաեւ 20: Իսկ աշակերտների մեծամասնությունը դիմում է ոչ թե իրենց ուսուցիչներին, այլ պետհամալսարանի ու պետբուհերի դասախոսներին: Պատճառը դժվար չէ հասկանալ. բուհական դասախոսը միշտ էլ կարող է պետք գալ...

Վերջին ամիսներին դարձյալ ուշացվում է ուսուցչի անչափ խղճուկ աշխատավարձը, որն առանց այդ էլ մի բան չէ: Մի՞թե իշխանությունների համար այնքան դժվար ու անլուծելի է դարձել ուսուցչի խղճուկ աշխատավարձը գոնե ժամանակին վճարելը: Իսկ աշխատավարձի իսկական, էական բարձրացում մոտակա ժամանակներում չի նախատեսվում:

Ցանկացած արժանապատիվ հասարակությունում ուսուցիչը վայելում է համընդհանուր սեր ու հարգանք: Սակայն վերջին տարիներին մեզանում ճիշտ հակառակ դրությունն է: Բոլորի կողմից մոռացված, հանիրավի նվաստացած ու մենակացված ուսուցիչը հեռու է կանգնած հասարակական իրեն հատուկ կյանքից եւ համբերատար կրում է դառն իրականության ու բվառ կյանքի հարվածները:

Հայ ուսուցիչը՝ թշվառ կացության մեջ

Հիմա դրությունը կտրուկ փոխվել է, եւ ուսուցիչը հայտնվել է ողբալի կյանքի հատակում: Նախնեաստաջ խստորեն սասանվել է ուսուցչի հեղինակությունը: Նա այլեւս հասարակությանը ուղղություն ցույց տվող, նրան գաղափարապես առաջնորդող անձ ու անհատ չէ, այլ մի սովորական, խղճուկ մահկանացու, որի աշխատավարձը նոր կարգերի օրոք տատանվում է 10 դոլարի սահմաններում: Ընդամենը 10 դոլար... եւ ամեն ինչ ասված է առանց մեկնաբանությունների:

10 դոլար վաստակողը հասարակության մեջ ոչ միայն դրաստելի եւ դրաստվավոր դիրք չի կարող ունենալ, այլ ընդհակառակը՝ կդառնա հեգնանքի ու ծաղրի առարկա, ինչը որ իրողություն է: Եթե նախորդ սերունդները իրենց ուսուցիչներին հարգում ու դրաստվում էին ողջ կյանքի ընթացքում, արդա այսօրվա իրականության մեջ ուսուցչից երեկվա սաները ոչ միայն չեն «քաշվում» ու երկյուղում, այլեւ հենց աշակերտները շատ հաճախ կողքից խոսքերով «ուզբիրասներ» ու զանազան կոնֆիլիկտային վիճակներ են ստեղծում: Հենց դպրոցի դրսերի ներսում ուսուցիչը իրեն անարժանով ու անդրաստան է զգում: Առաջներում աշակերտներն էին ուզիներ փնտրում շահելու ուսուցչի բարյացակամությունն ու բարեկամությունը: Ներկա դրությունում էականորեն փոխվել է նաեւ հոգեբանական այս իրավիճակը: Շատ հաճախ խեղճ ու անզոր ուսուցիչն է նվաստացուցիչ քայլեր անում շահելու ազդեցիկ ու մեծահարուստ ծնողների զավակ իր դասընկերների բարյացակամությունը:

Այսպիսի նվաստացուցիչ դրություններում անկարելի է ուսուցիչներից սպասել ու ակնկալել մեծ կիրք ու եռանդ, բեղուն ջանքեր ու տաղանդ արժանապատիվ ու գրագետ սերունդ կրթելու ուղղությամբ: Դա արդեն դատապարտված է, քանզի այսօր ուսուցիչը հենց ինքը կարիք ունի հասարակության գործուն աջակցությանը, նրա ուշադրությանը, նյութական եւ բարոյական սատարմանը: Այլապես այսպես երկարատեւ շարունակվելու դեպքում ոչ միայն կյանք մտնող սերունդները «կկաղեն» կրթվածության ու դաստիարակվածության իմաստով, ոչ միայն հայ ներկայիս հասարակության մեջ գրագետ մարդկանց սուր դակաս կզգացվի, այլեւ հետզհետե մոռացության կմատնվեն բուն հանրային կրթության հիմնախնդիրները, վտանգավոր չափով անկում կարող են բարոյական չափանիշներն ու ընկալումները:

Հանրային կրթության գործը երկրորդականի մատնելը խիստ վտանգավոր է, ինչը նկատվում է այժմ: Դրությունը փրկելու համար, ամենաանհետաձգելին ուսուցիչների նյութական դրության կտրուկ բարելավումն է: Նրա աշխատավարձը կյանքի գոնե նվազագույն մակարդակին հասցնելը: Պետք է սկսել հենց այս կետից, հետո մտածել հասարակական ու բարոյական մի շարք անհրաժեշտ ձեռնարկումների մասին:

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
դրամական գիտությունների թեկնածու

ՍՓՅՈՒՌՔ

Կանադահայ սոպրանո Ալին Քուքանը գերում է հանդիսատեսին

Անցյալ հոկտեմբերին Արիզոնա օպերայում Դելիբի «Լակմե» ներկայացման մեջ գլխավոր դերի հաջող դերակատարումից հետո, կանադահայ սոպրանո Ալին Քուքանը շարունակում է արդել բազմազան կյանքով: Փետրվար ամսին, ըստ «Արմինյան Միրոր Սփեքթեյթոր» շաբաթաթերթի տվյալների, կլանեսիս Անդրե Մուայանի եւ դաշնակահարուհի Լուիզ-Անդրե Բարիլի ընկերակցությամբ նա շրջագայել է Կանադայի Քվեբեկ եւ Նյու Բրանզուիք շրջանները զարկ տալու «Երաժշտասեր երիտասարդություն» կազմակերպության կողմից անցկացվող նոր տաղանդների որոնման աշխատանքներին:

Մոտիկ ապագայում նրան սպասում են ելույթներ Վանկուվերի սիմֆոնիկ նվագախմբի (Կաղ Օրֆի հայտնի «Կարմինա Բուրանան») եւ Օդեռա Ֆրանսեի հետ: Վերջինս Նյու Յորքի Լինկոլնի կենտրոնում բեմադրում է Գունոյի «Լա Կուլոմբ» օպերան: Այնուհետեւ ապրիլին նա առաջին անգամ ելույթ պետք է ունենա Ֆրանսիայում, որտեղ «գիշերվա բազուկի» Մոցարտի «Կախարդական ֆլեյտան» եւ մայիսին որպես Աննա Թրուլավ Ստրավինսկու «Զվարճամոլի արկածները» օպերաներում:

«Քուքանը կարողանում է գրավել հանդիսատեսին», գրել է նրա մասին երաժշտագետ Դանիել Բարլին «Թուքսոն Սիթիզեն» թերթում, ավելացնելով «նա ապամանդի նման փայլում է ամբողջ ներկայացման ընթացքում, երգելով հասակ ու ճշգրիտ, եւ այն էլ այնպիսի թեթեւությամբ, կարծես զրոսանքի է դուրս եկել հաղթային այգում»:

Հ. Ե.

«Նոր Հայաստան» օրաթերթի հնգամյակը

Մոտ 400 հոգու ներկայությամբ Գլենդելի «Անուշ» ճաշարանում նշվել է «Նոր Հայաստան» օրաթերթի հրատարակման հինգերորդ տարեդարձը: Խոսք են ասել Լոս Անջելեսում Հայաստանի ավագ հյուպատոս Արմեն Բայբուրդյանը, օրվա նախագահ Հերի Տիրամերյանը, Թորգոմ Բոսանջյանն ու Վահան Բահարյանը: Հանդիսության ընթացքում տեղի է ունեցել նաեւ մի հանգանակություն, որից գոյացած 16 հազար դոլար գումարը պետք է օգտագործվի ի նպաստ թերթի բարգավաճման: Վերջում ընդհանրական խոսք է ասել թերթի հրատարակիչ-խմբագիր Վահան Ջանսըզյանը:

«Էնվերի վերջը»

Հայկական ժողովրդային շարժման «Սփյուռք» դաշնությունների (Բեյրութ) վերջին հաստատ տեղեկանում ենք, որ Լիբանանի մայրաքաղաքում Ռուբեն Սեւակի անվան մշակութային հիմնարկի կողմից հրատարակվել է «Հայրենի լրագրող-հեռագրող» Վլադիմիր Պետրոսյանի «Էնվերի վերջը» դատավավերագրական վեպը: Իբրեւ հաղթական եռադեպության անդամ եւ Հայոց ցեղասպանության գլխավոր դերակատարներից Էնվեր փաշայի կենտրոնական Ասիայում ունեցած արկածախնդիր գործունեության մասին դատապարտող գրքի հեղինակը մանրամասն ներկայացնում է նրա դանթուրեական ծրագրերի ձախողման դատաձառները, ընդհուպ ներկայացնում նրա արժանի վախճանը հայազգի հեռախույզ Մելքումովի ձեռքով: Գիրքը լույս է տեսել դատական լուսանկարներով:

ՍՈՒՍԱՆՆԱ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

ԿԱՊԵՐ

Չինաստանում կսկսվի հայ մշակույթի տասնօրյակը

ԵՐԵՎԱՆ, 18 ՄԱՐՏ, ՓԱՍՏ: Մարտի 20-ին Չինաստան կմեկնի հայ մշակույթի գործիչների դատվիակությունը՝ մասնակցելու Չինաստանում հայկական մշակութային տասնօրյակին, որը կտեւի մարտի 21-31-ը: Պատվիրակությունը, որը գլխավորում է Հայաստանի մշակույթի, սպորտի եւ երիտասարդության նախարար Արմեն Սմբատյանը, ներկայացնում է հանրապետության մշակույթի այնպիսի նշանավոր գործիչների եւ կոլեկտիվների, ինչպիսիք են Սվետլանա Նավասարդյանը, Կոմիտասի անվան խառյակը, «Տաղարան» հնագույն երաժշտության համույթը, Կոնստանդին Սիմոնյանը, Մարիետա Անտոնյանը, Լիդիա Թելունցը եւ ուրիշներ: Բացի համերգային ծրագրերից, հայ մշակույթը կներկայացվի մի շարք ցուցահանդեսներով, որոնց թվում են նաեւ հայկական գրաֆիկայի եւ գեղարվեստական լուսանկարչության ցուցահանդեսներ: Առանձին ցուցադրությամբ կներկայացվեն Սերգեյ Փարաջանովի մի քանի տասնյակ կոլաժները, որոնք Չինաստանում կներկայացնի Փարաջանով թանգարանը:

Հայ-ճապոնական-մշակութային համագործակցությունը՝ նոր պայմանագրով

Մարտի 19-ին արտաքին գործերի հետ մշակութային կապերի ու համագործակցության հայկական ընկերության տահում միջոցառում էր կազմակերպել Հայաստան-Ճապոնիա ընկերությունը: Ընկերության նախագահ էդուարդ Հակոբյանը ներկայացրեց հանդիպման հիմնական խնդիրները: Նախ Հայաստան-Ճապոնիա ընկերությունից պետք է ընտրվեն դատագամավորներ մշակութային կապերի ընկերության 7-րդ կոնֆերանսի համար, որը կայանալու է ապրիլի վերջին: Նաեւ՝ երկուաբթի սպասվում է Ճապոնիայի դատագամավորական խմբի այցը: Միջոցառման ժամանակ խոսվեց մեր եւ Ճապոնացիների համատեղ աշխատանքների մասին եւ հաստատվեց այդ աշխատանքի ծրագիրը: Ասենք Ճապոնիա էր մեկնել հայկական դատագամավորական խումբը: Երկկողմանի դայմանագիր է կնքվել, ըստ որի Ճապոնիայում ստեղծվելու է հայկական մշակութային կենտրոն, իսկ Հայաստանում՝ Ճապոնական մշակութային կենտրոն: Նախատեսվում են մի շարք ցուցահանդեսներ Ճապոնիայում:

Վերջին այցի ժամանակ Տոկիոյում համերգներով հանդես է եկավ դաշնակահարուհի Սվետլանա Նավասարդյանը: Դրանից հետո դաշնակահարուհին հրավերներ ստացավ, շրջագայեց Ճապոնիայում եւ տվեց 19 համերգ:

ՍՈՒՍԱՆՆԱ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

Հայկական երեկո Բուդապեշտում

ԲՈՒԴԱՊԵՇՏ, 19 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Բուդապեշտի 3-րդ թաղամասի հայոց հիմնավարության եւ նրա նախագահ Սեւան Սարգսյանի նախաձեռնությամբ, հայոց հիմնավարությունը մասնակցել է տեղի ազգությունների փառատոնին: Ներկայացվել են հայկական գեղանկարչության, կիրառական արվեստի նմուշներ, հունգար ուսանողների՝ հայկական թեմաներով կատարված աշխատանքներ, խաչքարեր, Ս. Էջմիածնի մայրավանքի մանրակերտը, Մխիթար Սեբաստացու կիսանդրին եւ այլն: Ցուցադրահներից մեկում տեղ էր հատկացված Հարություն Բալաբանյանի գեղարվեստական լուսանկարներին: Հանդիսության ընթացքում ելույթ ունեցած հայ համայնքի ներկայացուցիչները խոսել են այսօրվա Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի տնտեսական ու քաղաքական կացության մասին, ներկայացրել հայ գրականության ընտիր էջեր: Ցուցադրվել են փաստավավերագրական ժապավեններ, հնչել է հայկական երաժշտություն:

Մանկական գեղանկարչության միջազգային ցուցահանդես Երեւանում

ԵՐԵՎԱՆ, 18 ՄԱՐՏ, ՓԱՍՏ: Հայաստանի Մանկական գեղագիտական կենտրոնում բարի ավանդույթ են դարձել գարնանային տարբեր ցուցահանդեսները: Այս տարի գեղագիտական կենտրոնի գարնանային ցուցահանդեսը չի սահմանափակվի միայն հայ երեխաների ստեղծագործությունների՝ ցուցադրությամբ: Արդեն նախնական դայմանավորվածություն է ձեռք բերվել ապրիլին Երեւանում մանկական գեղանկարչական աշխատանքների միջազգային ցուցահանդես բացելու մասին: Այս նախաձեռնությամբ հանդես են եկել Հայաստանի մանկական գեղագիտական կենտրոնը եւ ճապոնական «Սոկկա գակայի ինտերնեյշընլ» ընկերությունը: Ցուցահանդեսի առիթով գեղագիտական կենտրոնի կողմից տպագրության է նախապատրաստվում հատուկ դատկերագիրք եւ տեղեկագիր: Հատկանշական է, որ այս ցուցահանդեսին կմասնակցեն նաեւ Վրաստանի եւ Ադրբեջանի ստեղծագործող երեխաները, այս դեպքում վրացական կողմը կաջակցի ադրբեջանցի երեխաների ստեղծագործությունների ցուցադրության կազմակերպմանը: Ցուցահանդեսի օրերին Ազգային օպերայի դահլիճում տեղի կունենա գեղագիտական կենտրոնի սաների ուժերով կազմակերպած համերգը:

Գյումրի. «Պոլոզ-Մուկուչ»-ի՝ ինքնուրույն երգիծաբերթ

3 ամսվա ընդմիջումից հետո Գյումրիում լույս տեսավ «Պոլոզ-Մուկուչ» անկախ երգիծաբերթի այս տարվա առաջին համարը: Այն առաջինն է նաեւ մեկ այլ իմաստով: «Կումայրի» քաղաքային թերթի նախկին հավելվածն այժմ դարձել է ինքնուրույն երգիծաբերթ:

Հիմնադիրը «Կումայրի» հրատարակչությունն է, որ փետրվար ամսից հրատարակում է նաեւ «Անցուդարձ» շաբաթաթերթը:

«Պոլոզը» հետեւելու է մեր կյանքի բոլոր անցուդարձերին, ծաղրելու է զազրելին, «կոծելու» է բոլոր նրանց խաբրին, ում խիղճը «հողը տվել է գլխին»...

Պարբերականը ձգտելու է Լենինական-Գյումրու սուր խոսքը հասցնել հայ մարդուն՝ բոլոր նրանց, ովքեր ունեն երգիծանքի բուժիչ «հաբերի կարիքը»:

Հաջողություն նրան:

Չիբոդգյանների տունը կնորոգվի

Շիրակի մարզպետարանի մշակույթի բաժնի վարիչ Հասմիկ Կիրակոսյանը տեղեկացրեց, որ Հայաստանի կառավարությունը Չիբոդգյանների տան վերանորոգման համար տրամադրել է 20 մլն. դրամ: Չիբոդգյանների տունը հին Գյումրին խորհրդանշող կառույցներից մեկն է, «Կումայրի» դատմաճարտարապետական արգելոց-թանգարանի առավել այրի ընկնող հուշարձաններից: Այստեղ է տեղավորված ժողովրդական ճարտարապետության եւ հաղթային կենցաղի թանգարանը: Նորոգումից հետո հնարավոր կլինի վերաբացել վերջինիս ավելի քան 8 տարի ընդհատված գիտական ցուցադրությունը, որը ներառում է Ալեքսանդրապոլի տնտեսական ու հասարակական կենցաղը, հոգեւոր ու նյութական մշակույթը (19-րդ դարավերջ, 20-րդ դարի 20-ական թվականներ):

ԳԵՂԱՄ ՄԱՐՏՈՅԱՆ,
Գյումրի

digitised by A.R.A.R.@

ՈՒԵՖԱ-Ի ԳԱՎԱԹ

«Տեներիֆեն» անսակնկալ է մատուցում

Իտալական «Ինտերի» կիսապաշտպան Գանցը բելգիական «կողպեմներ» բացելու մասնագետ է

ՏՐԱՅԲ ՆԱԶԱՐՅԱՆ.

UEFA CUP

Մարտի 18-ին վերսկսվեցին եվրոպական ակումբային մրցաշարերի դասախսան հանդիպումները կայացան ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկության քառորդ եզրափակիչ փուլի երկրորդ խաղերը: Դրանք կրկին աղացուցեցին, որ գավաթային մրցակարգը անկանխատեսելի է եւ հավասարեցնում է մրցակիցների հնարավորությունները, քանզի հաղթողը որոշվում է երկու մրցամարտերի գումարային արդյունքով:

Ֆրանսիայի առաջնության առաջատար «Մոնակոն» հյուրընկալել էր դրեմիեր լիգայում 4-րդ հորիզոնականը զբաղեցնող «Նյուքասլ Յունայթեդին»: Հիշեցնենք, որ մեկնարկային խաղում ֆրանսիացիները հաղթել էին անգլիացի ֆուտբոլիստներին 1-0 հաշվով: Այսօր «Մոնակոն» Եվրոպայում ամենաաաղ բիմի համբավ է վայելում: Այս խաղում էլ «Մոնակոյի» ֆուտբոլիստները չէին դատապարտվում դարձիակվել դաշտդանությունում: Մանավանդ, որ նրանց համադասախսան լիգի էին հաղորդել տեղական մարզական լրագրողներ: Ֆրանսիացիների համար հոգեբանական մեծ հարված էր այն հանգամանքը, որ եվրագավաթներում իրենց բիմերը մրցակիցներին (ոչ միայն ֆուտբոլում) հանդիպելով մոտ 20 անգամ, մեծամասամբ դարձվել են: Այդ մրցամարտերում ֆրանսիացիներին միայն երկու անգամ է հաջողվել խաղադաշտը բողնել հաղթանակած: Ճիշտ է, այս անգամ արդեն երկրորդ խաղակեսի միջնամասում «Մոնակոյի» հաղթանակին ոչ ոք չէր կասկածում: «Մոնակոն» գրոհում էր լայն ճակատով եզրային երկար փոխանցումների շնորհիվ հաճախ փոխելով գրոհի ուղղությունը: Այս տակտիկան էլ հաջողություն բերեց բիմին, քանզի անգլիացիների դաշտդանությունը երբեք աչքի չի ընկել ամրությամբ: Բնականաբար, չդիմանալով հզոր ճնշմանը, այն մեծ ճեղք տվեց: Երեք գեղեցիկ անդասախսան գոլերը մենամարտի ընդհանուր հաշիվը դարձրեցին 4-0 օգուտ մոնեգասկերի:

Իսպանական «Վալենսիան», հաջող անցկացրած անցյալ մրցաշրջանից հետո, այս տարի զիջել է դիրքերը: Ազգային առաջնությունում զբաղեցնելով 10-րդ տեղը, բիմը հայտնվել է վտանգավոր գոտու շեմին եւ մեծ գլխացավանք առաջացրել իր համար: Երկրորդ մրցամարտը գերմանական «Շալկե-04»-ի դեմ խաղացիներն անցկացրեցին սեփական մարզադաշտում: Գերմանական ակումբի ֆուտբոլիստները, որ առաջին խաղում երկու անդասախսան գնդակ էին ուղարկել մրցակցի դարպասը, խաղում էին այնպես, ինչպես կխաղար իրեն հարգող գերմանական յուրաքանչյուր բիմ: Նրանք ձգտում էին «խաղաղ դաշն» կնքել իսպանացիների հետ եւ հասան նպատակին: Պատասխան հանդիպման հաշիվն է 1-1, ընդհանուր հաշիվը 3-1: Այսպիսով «Շալկե-04»-ակումբը, որը վերելքով է հանդես գալիս նաեւ բունդեսլիգայի առաջնությունում (բիմն ընթանում է 5-րդ տեղում), շարունակում է դայքարը բաղձալի մրցանակի համար:



Պահ «Ինտեր»-«Անդերլեխտ» հանդիպումից

Շատերի համար անակնկալ դարձավ Դանիայի «Բրոնդբյու» եւ Իսպանիայի «Տեներիֆե» ակումբների հանդիպման արդյունքը: Երկու շաբաթ առաջ սեփական խաղադաշտում դարձվելով 0-1 հաշվով, իսպանացիները փայլուն խաղ ցուցադրեցին դանիական ակումբի մարզադաշտում: Իսպանիայի առաջնությունում «Տեներիֆեի» հարձակվողները մեկ խաղում միջին հաշվով մոտ երկու անգամ մրցակիցներին ստիպում են դայքարը վերսկսել խաղադաշտի կենտրոնից: Այս անգամ էլ նրանք դաշտից չհեռացան առանց «նախատեսված» գոլերի: Հանդիպումն անցավ հետաքրքիր դայքարում: Կողմերից ոչ մեկը չէր ուզում զիջել: Չէ՞ որ խաղի արժեքը չափազանց մեծ էր: Դանիայի ֆուտբոլիստները չէին խորհում կոռնիս խաղից, եւ մրցավարը ստիպված էր հաճախ դիմել սուլիչի «օգնությանը»: Չնայած դանիացիները գործնականում անանցանելի էին դարձրել իրենց պաշտպանական գիծը, բայց «Տեներիֆեի» ֆուտբոլիստներին, այնուամենայնիվ հաջողվեց երկու անգամ ճակատագրական հարված հասցնել դաշտի տերերին: Ընդ որում, վճռական երկրորդ գոլը Մասան խփեց լրացուցիչ ժամանակում 118-րդ րոպեին: Երկու խաղերի արդյունքով իսպանական ակումբը դուրս եկավ մրցումների հաջորդ փուլ:

Իտալական «Ինտերնացիոնալեն» ընդունել էր բելգիական «Անդերլեխտ» ակումբին: Այս խաղը անցավ ծանոթ սցենարով: Հյուրերը զիջելով առավելությունը, առաջինը գնդակ ընդունեցին սեփական դարպասը: «Ինտերը», որի կազմում հիշ չեն բարձրակարգ ֆուտբոլիստներ, հենց սկզբից էլ հասկացրեց, որ մտադիր է թելադրել իր դայմանները: Ինչպես եւ առաջին խաղում, որը ավարտվել էր 1-1 հաշվով, այս անգամ եւս փայլում էր «Ինտերի» գրոհային ոճի կիսադաշտպան Գանցը: Նրա անհատական անցումները բազում խնդիրներ ստեղծեցին բելգիացի դաշտդանների համար: Իսկ մինչեւ ընդմիջում «Անդերլեխտի» դարդասդահի Գեերտ դե Վիլդերի դարդասին վտանգավոր դահեր էին ստեղծում նաեւ Յուրի Ջորկայեֆը եւ չիլիացի Իվան Սամորանոն: Այնպես որ Գանցի խփած երկու գոլերը (12-րդ եւ 60-րդ րոպեներին) միանգամայն օրինաչափ էին: Առավելագույնը, որը հաջողվեց բելգիացիներին, միայն մեկ դաշտասխան գոլ խփել «Ինտերի» դարդասը: Իտալական ակումբը, հաղթելով 2-1 հաշվով, նվաճեց ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկության կիսաեզրափակիչ փուլի ուղեգիր: Բյուրեղաղակյա գավաթ տանող ճանապարհի նախավերջին «արգելքի» վիճակահանությունը կկայանա մարտի 21-ին:

ՇԱԽՄԱՏ

Կարեն Աարյանը մոտ է գրոսմայստերի նորմային

Ավարտին է մոտենում Կրասնոդարում անցկացվող Ռուսաստանի շախմատի գավաթի բաց խաղարկության հերթական փուլը, որը նվիրված է հայ շախմատային գործիչ Գեորգի Սարկիսովի հիշատակին:

17-ամյա երեւանցի Կարեն Աարյանը, չընկճվելով նախորդ օր կրած դարտությունից, նախավերջին, ութերորդ տուրում սեւերով վստահորեն հաղթեց մոլդավացի ճանաչված գրոսմայստեր Վիկտոր Բոլոգանին: Այս նոր հաջողությունից հետո հայ շախմատիստը 5.5 միավորով մի խումբ գրոսմայստերների հետ բաժանում է երկրորդ տեղը: Առջեւում միայն ռուսաստանցի գրոսմայստեր Պավել Տրեգուբովն է, որը վաստակել է 6.5 միավոր: Գերազանց խաղով Աարյանը արդեն նկատելիորեն բարձրացրել է իր անհատական գործակիցը: Բայց ավելի կարեւորն այն է, որ վերջին տուրի հանդիպումը ոչ-ոքի ավարտելու դեպքում Աարյանը երկրորդ անգամ կլուսցնի գրոսմայստերի նորման: Եզրափակիչ տուրում Կարենը սպիտակներով խաղալու է մրցաշարի ամենահեղինակավոր մասնակիցներից մեկի ուկրաինացի գրոսմայստեր Վլադիմիր Մալանյուկի հետ:

Մրցաշարին մասնակցող հայ մյուս շախմատիստների արդյունքները վերջին տուրից առաջ այսպիսին են. Արա Մինասյան 4, Աշոտ Նադանյան 3.5, Անդրանիկ Մաթիկոզյան եւ Արսեն Ստամբոլցյան 3-ական, Սամվել Պողոսյան 2 միավոր: Ավելացնենք, որ մրցաշարի կազմակերպիչները խնդրեցին հատուկ նշել մեր եւս մեկ հայրենակցի կրասնոդարցի տղայի վարպետ եւ գործարար Սամվել Հովհաննիսյանի զգալի ծառայությունները շախմատային այս փառատոնի հաջող կազմակերպման գործում: Ս. Հովհաննիսյանը Գեորգի Սարկիսովի սաներից է, այժմ ղեկավարում է Կրասնոդարի «Սուսաննա» ֆիրման եւ ամեն կերպ աջակցում է երկրամատում շախմատի զարգացմանը: Հինավուրց խաղով լրջորեն զբաղվում է նաեւ Սամվելի փոքրիկ որդին Նարեկը:

Գ. Հ.

Հոլանդիայում մեկնարկել է 17-րդ կարգի շախմատի մրցաշար

Հոլանդիայի Զնեհ-Ափել քաղաքում անցկացվող շախմատի միջազգային մրցաշարում կայացան 2-րդ տուրի դարտիաները: Ոչ-ոքի խաղացին շվեդ Ուլֆ Անդերսոնը եւ ռուսաստանցի Ալեքսանդր Խալիֆմանը: Մյուս երկու մրցամարտերը հետաձգվել են: Ռոբերտ Սվիդլերի եւ Ալեքսեյ Շիրովի, ինչպես նաեւ Արթուր Յուսուպովի եւ Լյուկ վան Վելլիի հանդիպումներում 6 ժամյա դայքարից հետո մրցակիցներն ավելի քան 60-ական քայլ կատարեցին: Այս մրցաշարը ըստ գործակցի 17-րդ կարգի է:

Հայ հեծանվորդները հրավիրվել են Իրանի բազմօրյա հեծանվավազքին

Ապրիլի 25-ից մայիսի 6-ը Իրանի Թավրիզ քաղաքում անցկացվելու է բազմօրյա հեծանվավազք, որին մասնակցելու դատրաստակամություն են հայտնել 28 երկրների մարզիկներ: Սասնավորապես մեկնարկ դուրս կգան Ճաղոնիայի, Չինաստանի, Ուկրաինայի, Բելառուսի եւ այլ երկրների դատվիրակները: Հեծանվավազքի երթուղու ընդհանուր երկարությունը 1600 կմ է, այն կանցկացվի 12 փուլով: Այս մրցաշավը դասվում է մարզածեւի միջազգային ֆեդերացիայի օրացուցային դլանով նախատեսված խոշոր մրցումների շարքը: Հանրապետական սդորտվարչության լրատվական կենտրոնից հայտնում են, որ հեծանվավազքին մասնակցելու դատշոնական հրավեր են ստացել նաեւ հայ մարզիկները:

Դեյմոնը կրկնում է հոր անցած ուղին

«Ֆորմուլա-1»-ի աշխարհի չեմպիոն Դեյմոն Հիլը կնոջ՝ Ջորջիի հետ Բուկինգեմյան դալատում, մարտի 18-ին, ելիզաբեթ 2-րդ թագուհուց դարգեւ ստանալուց հետո լուսանկարվեց մամուլի համար: Հիլը գնաց հոր՝ Գրեհեմ Հիլի հետքերով, որը նույնդես հաղթել է աշխարհի առաջնությունում եւ նման դարգեւի արժանացել թագուհու կողմից:

Առայժմ առջեւում գերմանական զույգն է

Շվեյցարիայի Լոզանն քաղաքում ընթանում է գեղասահքի աշխարհի առաջնությունը: Մարզական զույգերի դայքարում «կարճ» ծրագրի կատարումից հետո առաջատարներն են գերմանացիներ Մանդի Վոեբցելը եւ Ինգո Սբոյերը: Ռուսաստանցիներ Մարինա Ելցովան եւ Անդրեյ Ուշկովը զբաղեցնում են երկրորդ տեղը: Երրորդ դիրքում եւս մեկ ռուսական զույգ է ելնում Բերեժնայան եւ Անտոն Սիխարուլիձեն: Ռուսական մյուս երկյակը Օքսանա Կազակովա-Արթուր Դմիտրիեւ առայժմ գրավում է 6-րդ հորիզոնականը:

«Ֆուտբոլ +» շաբաթաթերթը մեկ տարեկան է

FOOTBALL PLUS

ՖՈՒՏԲՈԼ Plus

Ուղիղ մեկ տարի առաջ Հայաստանի մարզական մամուլի շարքերը համալրեց «Ֆուտբոլ +» շաբաթաթերթը: Շուկայական հարաբերությունների եւ տնտեսական ճգնաժամի դայմաններում Հայաստանում շաս թերթեր դարզապես «թիթեռի կյանք» են ունենում: Այս ճակատագրից հաջողվեց խուսափել «Ֆուտբոլ +»-ին, որի գլխավոր խմբագիրն է հայտնի մարզական հեռուստամեկնաբան Սուրեն Բաղդասարյանը: Շաբաթաթերթը ոչ միայն կարճ ժամանակում իր ուրույն տեղը գրավեց հայկական մարզական մամուլի «ընտանիքում», այլեւ ձեռք բերեց իր ընթերցողների կայուն «բանակը»: Հուսանք, որ այն գնալով կմեծանա, շնորհիվ մեր գործընկերների նպատակասլաց եւ արդյունավետ աշխատանքի:

Շնորհավորում ենք «հոբելյարի» կոլեկտիվին, ցանկանում առողջություն, հաջողություն (այն անհրաժեշտ է հատկապես լրագրողներին) եւ երջանկություն «Ֆուտբոլ +»-ի ստեղծագործական անձնակազմին: Ցանկանում ենք ավելի «սուր» գրիչ եւ անկանխակալ մոտեցում հայկական սդորտի (ոչ միայն ֆուտբոլի) խնդիրները լուսաբանելիս:

Ինչպես ասում են՝ մեծ նավին, մեծ նավարկություն:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Օրվա հետքերով

ԹԵԺ ԿԵՏ

Ալբանիայում խռովություն, Իտալիայում՝ արտակարգ դրություն

19 ՄԱՐՏ, BBC, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ». Ալբանիայից հաղորդում են նոր բռնարարքների մասին՝ զինված հրոսակախմբերի մասնակցությամբ: Ականատեսների վկայությամբ Հունաստանի սահմանի մոտ գտնվող Կորչա քաղաքում դիմակավորված զինված մարդիկ թալանում էին տներն ու հիմնարկները: Հաղորդում են, որ անցած գիշեր Կորչայում սպանվել է առնվազն 10 մարդ: Այսպիսով, վերջին 4 օրում 37 մարդ սպանվեց: Հաղորդագրություններ կան նաեւ Վլյորա եւ Էլբասան քաղաքներում տեղի ունեցած բռնարարքների մասին: Այդ ընթացքում, վերջերս կազմավորված Ալբանիայի ազգային միասնության կառավարությունը մերժեց երկրի հարավի ապստամբների վերջնագիրը, որոնք պահանջում են, որ մինչեւ հինգշաբթի օրը նախագահ Սալի Բերիշան հրաժարական ներկայացնի: Վարչապետ Բաշիմ Ֆինոն հայտարարեց, որ վերջնագիրն անընդունելի է: Նրա խոսքերով, հակամարտող կողմերի միջեւ պետք է հաստատվի երկխոսություն: Միեւնույն ժամանակ, Ալբանիայի իշխանություններն այսօր ընդունեցին, որ երկրի բանակը՝ զինանոցների վերջերս տեղի ունեցած թալանի հետեւանքով փաստորեն գոյություն չունի: Պաշտպանության նախարարության պաշտոնյաների խոսքերով, ներկայումս բանակն ունի միայն 32 հազար զինվոր եւ սպա: Զորանոցների մեծ մասը թալանված է եւ ոչնչացված: Թեթեւ զենքերի հիմնական մասը գտնվում է բնակչության մոտ, իսկ ծանր զենքերից շատերը ոչնչացված են: Անցած 2 շաբաթվա ընթացքում թալանվել է 150 հազար միավոր հրաձգային զենք, մեծ քանակությամբ զինանյութեր, նռնակներ, պայթուցիկ նյութեր: Երկրի ռազմօդանավերի եւ ռազմանավերի մեծ մասը ներկայումս Իտալիայում է: Դրանք օգտագործվել են ալբանացի փախստականներին այս երկիր տեղափոխելու նպատակով: Ալբանիայի տանկերի մեծ մասը վնասված է: Ալբանիայում այրված են գրեթե բոլոր դատարանները, ոչնչացված են գրեթե բոլոր բանտերը, բանտերից փախել են հրեական հանցագործները: Երկրի արդարադատության նախարարն այսօր դիմեց միջազգային համայնքին՝ Ալբանիայի ոստիկանությունն ու արդարադատության համակարգը վերականգնելու խնդրանքով:

Ալբանիայից եկող փախստականների մեծ հոսքի պատճառով Իտալիայի կառավարությունը ողջ երկրով մեկ արտակարգ դրություն սահմանեց: Այն ուժի մեջ կլինի մինչեւ հունիսի վերջը: Շուրջ 10 հազար ալբանացիներ հարավային Իտալիայում պատսպարվել են տներում, ծիսասյլերում, վրաններում, տուրիստական ճամբարներում եւ ոստիկանական զինանոցներում:

Տեղական իշխանությունները փախստականներին մարդասիրական օգնություն ցուցաբերելու համար Հռոմի կառավարությունից դրամական եւ այլ օգնություն խնդրեցին: Փախստականներին կտրվեն ժամանակավոր մուտքի վիզաներ, որոնք ուժի մեջ կլինեն այնքան ժամանակ, քանի դեռ Ալբանիայում չի կարգավորվի իրավիճակը: Սակայն Իտալիայի իշխանություններն արդեն իսկ ոստիկանների ուղեկցությամբ ուղղաթիռներով հետ են ուղարկել շուրջ 250 ալբանացու, որոնց մյուս փախստականները ճանաչել են որպես բանտերից փախած հանցագործների:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Առանձնատուն, 80 քառ. մ նկուղ-ավտոնակով եւ երկու բնակելի հարկով (առանց ներքին հարդարանքի), «Զվարթնոց» կինոթատրոնի մոտակայքում (Մոնումենտ): Կա նաեւ մրգատու ծառերով փոքրիկ այգի:

Զանգահարել՝ 27-22-57 ժամը 10-16, 58-33-26 ժամը 18-23

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

■ 3 սենյականոց բնակարան 5 հարկանի քառ. շենքի 5-րդ հարկում, 70/50 քմ, ավտոնակով: Հրաչյա Քոչար 23 (նախկին Չեկի խանութի մոտ):

Հեռախոս՝ 22-42-68

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

կիսակառույց երկհարկանի տուն Նոր Արեւ 31 փողոցում:

Հեռ. 45-59-99

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

2 սենյականոց բնակարան 5 հարկանի քառ. շենքի 1-ին հարկում. Դեմիրճյան 17 շենք:

Հեռախոսներ՝ 58-18-41, 52-30-56

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

3 սենյականոց բնակարան Նորքի 5-րդ զանգվածում. ս. 17, բն. 9

հեռ.՝ 64-88-85 68-03-47

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

3 սենյականոց բնակարան, ավտոտնակով: Վրացական փողոցում

ՀԵՌ՝ 25-11-87, 58-18-41

«ԱՅԱՔՍ»

ՖԻՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՁԵԶ ՀԱՄԱՐ ԿԱՋՄԱԿԵՐՊԵԼ

Ամեն երկուշաբթի տուրիստական ուղեւորություն

ՀԱԼԵՊ-ԲԵՅՐՈՒԹ

հաճելի ճամփորդություն, շահավետ առեւտուր արեւելյան հարուստ շուկայում

Երկու շաբաթը մեկ անգամ կանոնավոր ուղիղ չվերթ

ԵՐԵՎԱՆ-ԼԱՌՆԱԿԱ (ԿԻՊՐՈՍ)

Հրաշալի Միջերկրական ծովափ

Բարձրակարգ հյուրանոցներ բոլոր հարմարություններով

Կազմակերպվում է ավիատոմսերի վաճառք ԱՊՀ եւ բոլոր ուղղություններով:

ԵՐԵՎԱՆ, ՊՈՒՇԿԻՆԻ Փ. 43/ա ՀԵՌ. 538845, 531573

ՍԱԿԻ

The United Nations Development Programme in Armenia is seeking highly qualified specialists in economics, sociology, political science, environment and social issues. One specialist will be recruited for 6 months as a National Expert in each of the above disciplines.

The incumbents should have advanced university degree in their respective field. At least five years professional experience with broad exposure to cross-sectoral approaches important for national development; excellent knowledge of his/her own country; significant exposure to international discourse on human development issues, for instance through international conferences, advanced studies abroad, research and publications and/or international postings or work in international organisations; and experience in the formulation and execution of research and advisory projects related to specific aspects of national development.

Excellent communication skills, teamwork approach, excellent oral and written capabilities, proven planning and supervisory skills, creative approach in professional work, openness to new ideas and dialogue.

Excellent knowledge of Armenian, knowledge of English is highly desirable. Computer literacy is an advantage. Women candidates are encouraged to apply.

The interested candidates should complete P11 form (copy can be obtained from the guards at the UN building, 14 Karl Liebknecht) and submit an essay in English or Armenian (three pages maximum) with the following title: "Country Development in 1996". The deadline for applications is 5:00 p.m. March 28, 1997. The initial selection of the candidates will be done based on applications. Only selected candidates will be invited to an oral interview.

Հայաստանի ամերիկյան համալսարան

ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ

Ավարտական վկայագիր շնորհող ծրագիր

1997-1998 թթ.

Հայաստանի ամերիկյան համալսարանն ընդունում է դիմումներ «Անգլերենի դասավանդումը որպես օտար լեզու» ծրագրի համար, որն ավարտելուց հետո կտրվի վկայագիր: Դիմորդները պետք է ունենան համապատասխան բարձրագույն կրթություն անգլերեն լեզու, ժամանակակից լեզուներ կամ լեզվաբանություն մասնագիտությունների գծով եւ ներկայումս դասավանդեն դպրոցում կամ ԲՈՒՀ-ում:

Ընդունվելու համար անհրաժեշտ պայմաններից է ընդհանուր գնահատականների 4.0 եւ բարձր միջին ցուցանիշը:

Դիմորդները պետք է գերազանց տիրապետեն անգլերեն լեզվին: Պահանջվում է ունենալ վերջերս հանձնած TOEFL քննության 575 կամ բարձր միավորներ, կամ 1997 թ. մայիսի 6-ին ՀԱՀ-ում կազմակերպվող անգլերեն լեզվի քննությունից ստանալ բարձր միավորներ:

Դիմորդները պետք է ներկայացնեն՝

1. Դիպլոմ եւ նրդիր՝ իրենց պետծեններով,
2. Երեք երաշխավորագիր նամակ,
3. Լրացնեն դիմում եւ ֆինանսական հնարավորությունների մասին տեղեկանք:

Փաստաթղթերի ընդունման համար կանխավճարը դրամով կազմում է ՍՍԾ 10 դոլարին համարժեք գումար, որը պետք է մուծել փաստաթղթերը հանձնելիս: Փաստաթղթերի հանձնման վերջին ժամկետը սույն թվականի մայիսի 20-ն է:

Ընդունված բոլոր ուսանողները պետք է ՀՀ կրթության եւ գիտության նախարարության հետ ստորագրեն ավարտելուց հետո 18 ամիս Հայաստանում մնալու եւ աշխատելու մասին պայմանագիր:

Վերջնական ընդունելությունը կկատարվի դիմորդների նախորդ ուսումնական տվյալների եւ անգլերեն լեզվի քննության արդյունքների հիման վրա: Ծրագրի տեւողությունը երեք ուսումնական քառորդ է:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝ ՀԱՀ-ի ընդունելության գրասենյակ:

Հասցե՝ Երեւան, Մարշալ Բաղրամյան 40, 1 հարկ, 19 սենյակ, հեռ. 27-16-29:

ՀԱՀ-ը ռասայական, կրոնական, սեռային կամ ազգային խտրականություն չի ճանաչում

ԱՐՄԻՆԴ

ԿԵՆՏՐՈՆԸ

հայտնում է իր կողմից իրականացվող չարտերային չվերթների վերսկսման մասին:

Հրավիրում ենք զբոսաշրջիկներին եւ գործարար մարդկանց՝ օրյա չվերթայությունների հնարավոր չվերթներով

Երեւան - Դելի - Երեւան	-	7 օր
Երեւան - Բանգոգ - Երեւան	-	7 օր
Երեւան - Սինգապուր - Երեւան	-	7 օր

Չվերթայությունների ընթացքում զբոսաշրջիկները կգտնվեն բարձրակարգ հյուրանոցներում (անուղղակի երկու անգամ): «Արմինդ»-ը կօգնի նաեւ առեւտրի կազմակերպման հարցերով:

Ուշադրություն ➪ «Արմինդ» կենտրոնը գործարար մարդկանց առաջարկում է նաեւ ցածր գներով բեռների փոխադրում Երեւանից՝ նշված ուղղություններով:

Չվերթները կկատարեն մարտի 30-ին:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝ ➪ Գյուլբենկյանի փող. 27

Հեռախոսներ՝ 27-67-11, 28-02-63

The English Speaking Of Armenia. Attention !

The English Speaking Union is an educational charity which sponsors scholarships and exchanges, arranges educational programmes, promoting the effective use of English and international and cultural events. Today, the ESU, International headquarters of which are in London, has over 40 branches worldwide.

The Armenian branch is established in 1993 and the functioning of the steering commitee became possible.

On May 20 International Public Speaking competition will held in London.

The ESU of Armenia announces the first stage of Public Speaking competition in Yerevan which will take place March 27 at 10.00 in the hall of Yerevan State Institute named after V. Briusov. The theme of the competition is "EAST is EAST and WEST is WEST". Any aspect of eastern and western life can be chosen. Pupils and students between the age 10-20 are welcome to take part in the competition. Two finalists will be chosen by the independent commission for International Public Speaking Competition in LONDON. The deadline for the applications is March 25, 1997.

For detailed information please contact Noune Bekarian 572359, 550301.

(ESU of Armenia, Vice-chairman)
Yerevan State University
English Philology Chair

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՍԵԿՑԻԱ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՇԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԻ ԵՎ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ԱՍԱՍԻՆ ՀԵՌԱԽՈՍԱԿ 589167, 581351

«Պարբերական» հրատարակչության տպարան. Երեւան 23, Արշակունեաց 2. Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատուեր 541. Տպաքանակը՝ 3000. Ստորագրված է տպագրության՝ 19.03.1997. Գինը 100 դրամ.

digitised by A.R.A.R.@